



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

36^{րդ} ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 21 ՓԵՏՐՈՒԱՐ 1887

ԹԻԻ 3861

ՄԱՍԿԱՆԻՍ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ֆ. Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 դր. եւ օտար երկրաց համար 15 ֆրանք: Բաժանորդագրութեան զրկելու և անատակարարութիւն Սրբեկքի եւ Սահիի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատուրքիան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Table with 2 columns: Left column contains abbreviations (Ռ. Հ., Տ. ՃԻՍԻ, ՄԵԼԱՆԻՍ, ՀՐԱԶԴԱՆ) and right column contains their full names in Armenian (Ազգային (Մեր - Երես), Թիֆլիսէն նամակ, Պետրոքուրգէն նամակ, Ողջկան մը օրագիրն, Օրուան կեանքը, Հայք եւ ռուս-պարսկական պատերազմը)

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՌԻԲԱԹ 2) ՓԵՏՐՈՒԱՐ

ԱԶԳԱՅԻՆ

ՍԵՐ ԱՐԴԱՐ ԲՈՂՈՔԸ

Թող լուէ մեռնի, անդամալքծը կամ որոյ քաղցը է թշնամու լուծը: ԲԱՄԱՍԻ-ԲԱԹԻՊԱ

Որքան ալ ծանր լինի հարուածն, որքան ալ դառնացած լինին Հայոց հոգիները, բայց և այնպէս կարող չենք կորագլուխ հպատակիլ այն հրամանաց որք կը պատրաստեն եկեղեցւոյ և ազգութեան ջնջումը:

Մեր աչքին առաջն ունինք այն թղթակցութիւններն, որք Կովկասէն, Անդրկովկասէն և Ռուսաստանէն կը տեղան մեր խմբագրատունը: Այդ թղթակցութիւնք կը հաղորդեն մանրամասն տեղեկութիւններ Կովկասեան կառավարչապետին և նորա արքանեկաց գիտաւորութիւններու մասին: Հրապարակեցինք և կը հրատարակենք այդ թղթակցութիւններէն մի քանին և Հայ ազգն ըստ բաւականին գաղափար մ'ունի այժմ այն տխուր կացութեան, յորում կը գտնուին մէկ ու կէս միլիոն Հայք:

Գուցէ առաջին ակնարկով մը շատ վտանգաւոր չ'երևին դպրոցական այն

որոշումներն, որք պարտաւորիչ պիտի լինին Հայ աշակերտաց համար, և մենք քննք:

«Թող քրիստոնէական կրօնքն աւանդուի Ռուսաց լեզուաւ, թող Հայ վարժապետք պարտաւոր լինին ունենալ վկայական Ռուսաց «Եփեսոսեան» փանդը մեծ չէ ազգութեան համար:»

Այս օրինակ տրամաբանութիւն մը կ'ապացուցանէ թէ՛ կա՛մ պարզամիտներ ենք, կա՛մ ճակատագրին հպատակելու տկարութիւնն ունինք:

Ի՞նչ վտանգ կայ ազգութեան համար, եթէ պետական դպրոցներու մէջ, ուր կը յաճախեն ամեն կարգի Հայ աշակերտք, Հայոց կրօնքն աւանդուի Ռուսաց լեզուաւ:

Այսպէս կ'ըսենք 30—40 տարի առաջ մի ուրիշ Կովկասցի գիտնական և Ռուսաց լեզուաւ աւանդուեցաւ քրիստոնէականը Վրացի աշակերտին: Այսօր Վրացին իւր եկեղեցիէն արտասուելով դուրս կ'երէ, Կոթայի քովոյ, «Տէր ուղորձա՛» ըսելով: Հաւատացած է թէ Աստուած այլ ևս իրենց ձայնին չը լսեր, վասն զի ռուսերէն կը պատարագէ քահանայն, ռուսերէն կը պարտաւորի աղօթել ժողովուրդը:

Այո՛, առաջին անգամ քրիստոնէականը ռուսերէն աւանդուեցաւ Վրացւոց 19րդ դարու կիսոյն, և այդ դարը դեռ չը վերջացած՝ Վրաստանի մէկ ծայրէն միւս ծայրը՝ Քարթլինայէն Մինկրէլի, Մինկրէլէն Իմէրէթ, Իմէրէթէն Կուրայ, ամէն ուրեք առաջին վանքէն յետին գիւղը ռուսերէն է ժամասացութիւնը:

Տարաբաղդիկ Վրացի ժողովրդեան համար լաւագոյն էր մեռնիլ, քան նմանիլ մարդու մը՝ որոյ գլխուն դահիճը կ'իջեցնէ կացինը, բայց գլուխը կէս կըտրուած կը մնայ: այդպէս կը չարչարուի Վրացին իւր հոգեկան վշտերուն մէջ: Այդպէս կ'ուզեն ընել ի մեզ. ստոյգ է որ «Պատմութիւնը կը կրկնուի»:

Եւ միթէ մեր պատմութիւնն ալ չ'արձանագրեր դառնաղէտ կորուստներ ազգութեան համար՝ լոկ Քրիստոնէականի լեզուին պատճառաւ: Ի՞նչպէս կորան իւր հայ Բոլնիոյ 140,000 տուն, աւելի քան կէս միլիոն Հայերն: Օր մը մի Նիկոլ յաջողեցաւ օտար լեզուաւ ուսուցանել տալ Հայ մանկուոյն Հայոց քրիստոնէականը. օտար լեզուաւ քրիստոնէականին յաջորդեց օտար լեզու ժամասացութիւնն Հայ եկեղեցւոյն

մէջ, և տակաւին դարը չ'ընդրած՝ Հայ անունը իբր պատմական յիշատակ մը մնաց ի Բոլնիա:

Ո՛չ միայն մենք, այլ ամէն վտրք ազգութիւններ քաջ ըմբռնած են թէ որպիսի՞ վտանգներ կ'ապառնան ազգութեան մը եթէ օտար լեզու մը իւր ստուերն իսկ ցոյց տայ տաճարին դէրան առաջ: Չե՞նք գիտեր թէ՛ ինչպէս Պուլկարը սարսափահար էին յունաց կրօնական լեզուէն, և ռուսք միշտ կ'երկնէին թէ օր մը պուլկար տարրը պիտի լինի հելլէն շնորհիւ յունական եկեղեցւոյ ազդեցութեան, եւ ամէն զոհողութիւն յանձն առին անջատել պուլկար եկեղեցին յոյն եկեղեցիէն: Միթէ նոյն երկիւղը չ'ունեցա՞ն և ռուսները և սերպը. միթէ ամէնքն ալ չ'ուզեցին իրենց եկեղեցին պահպանել իրենց ազգային լեզուաւ: Եւ սակայն յոյնը ո՛չ մի հզօր պետութիւն է, ո՛չ մի մեծ ազգ. է՞ր այդքան երկիւղ:

Ներելի՞ է մեզ աներկիւղ լինիլ հանդէպ դարհուրելի ազգի մը լեզուին եւ կրօնքին:

Պահանջել հայ վարժապետներէն վկայագիր ռուսաց «Եփեսոսեան» մին է այն ապահով միջոցներէն որով կարելի պիտի լինի օր մը ռուսական լեզուն բեւեռել Հայոց սրտերուն մէջ:

Թող չ'առարկեն թէ՛ այդ խնդիրը լաւ վարժապետներ ունենալու խնդիր է. թէ Հայք չ'ունենալով լաւ վարժապետանոցներ Կովկասեան լեզուաւ լեզուներն այնքան հոգածութիւն կը տածէ Հայ մանկուոյն համար որ մինչեւ իսկ նոցա ընտիր վարժապետներ չ'որհեւրու միջոցները կը խորհի:

Ո՛չ, Ռուսիոյ Հայք ունին Գէորգեան ճեմարանը, ունին Ներսէսեան վարժարանն որը բաւական են մեծ քանակութեամբ ընտիր ուսուցիչներ արտադրել: Թողունք որ Հայ երիտասարդներ ի Գերմանիա, ի Զուիցերիա իրենց ուսումը կատարելագործելով կուգան կը մտնեն ի Կովկաս կը թափան ասպարէզին մէջ:

Եթէ Գէորգեան ճեմարանի և Ներսիսեան վարժարանի վիճակն անդոհացուցիչ երևին միթէ կարելի չէ՞ որ դոցա վերին տեսչութիւնը յանձնուի, այնպիսի Հայոց որք այսօր մեծ պատիւ կը բերեն նոյն իսկ Ռուսաց համալսարաններուն: Միթէ այսօր ռուս

սաց համալսարանները չե՞ն կառավարուի Հայերէ որք կը կոչուին էմին, Պատկանեան, Ներսէսեան, Նիթեանց, Քանանեանց, ևն ևն: Միթէ կարող չէ՞ մին ասոնցմէ կառավարել Գեորգեան ճեմարան մը կամ Ներսէսեան վարժարան մը:

Սակայն Կովկասեան իշխանութեան նպատակն այդ դպրոցաց բարեկրթութիւնն է՝ և ո՛չ ալ Հայ մանկուոյն ապագայն կը խորհի. այլ կը պատրաստէ այն միջոցն որով մի օր հնարաւոր լինի առանց դժուարութեան ռուս ուսուցիչ դնել Հայ դպրոցին մէջ:

Արդարեւ Հայ պատանիներն Ռուսաց «Բնական»ներու մէջ շարժւոր միանգամ և եթ մի ժամ հայերէն դաս պիտի առնուն, իսկ ուրիշ ամէն ռուսում պիտի աւանդուի ռուսերէն: Ի՞նչպէս կարելի է որ այդ պատանիներն օր մը կարենան հայերէն լեզուաւ աւանդել այն ամէն ռուսումներն զոր իրենք ռուսերէն ուսած են: Անհմուտ բառերու, անվարժ բացատրութեանց, տկար հայերէնի մէջ այդ ուսուցիչները կարող չպիտի լինին պարզ, դիւրին լեզուաւ աւանդել Հայ աշակերտաց ամէն նախնական գիտելիքներ, եւ հետեւութիւնն: Հետեւութիւնն այն պիտի լինի որ Հայ աշակերտք բնաւ յառաջագիւմելու կարող չպիտի լինին: Կովկասեան կրթական Հոգաբարձութիւնը յառաջ երաց այս վիճակէն, պիտի հրաւիրէ ռուս վարժապետներն որ դաս և մի քիչ յառաջագիւմելու հայ աշակերտներն, և ահա՛ այդ օրէն պիտի լեցուին մեր դպրոցներն ռուս վարժապետներով:

Չենք կարծեր որ ըսեն թէ՛ պարզ ենթադրութիւններ են սոքա: Միշտ վրացիք մեզ օրինակ լինին: Ճիշդ այս կրթական քաղաքականութեան հետեւեցան Ռուսք վրացոց նկատմամբ, և այժմ ամենայնպէս վրացի դիւզական դպրոցին մէջ ամենապարզ նախնական կրթութիւնն իսկ ռուս լեզուաւ կ'աւանդուի:

Նախորդ թիւերով բացատրած ենք արդէն վկայականներու խնդրէն առաջ դալիք չարիքները:

Բայց թողունք ի՞նչ որ կը վերաբերի զուտ ազգային տեսակէտին, եւ խորհինք անգամ մը թէ՛ ի՞նչ հետեւութիւններ կրնայ ունենալ Տաճկաստանի համար Ս. Էջմիածնի ռուսացումը:

Պառօն Նիկողայի տեղեկագիրը, զոր անցեալ տարի հրատարակեց Արեւի, կը հաստատէ թէ՛ Ռուսիոյ կառավարութիւնը միշտ կէտ նպատակի ունեցած է Տաճկաստանի նկատմամբ իւր քաղաքական դիտաւորութիւնները յաջողցնելու համար Ս. Էջմիածինն իրեն դործիք մ'ընել, և սակայն մեր Կաթողիկոսք միշտ ընդդիմադիր կուսակցութիւն մը կազմած են: Այժմ Ռուսք ուրիշ ռազմագիտութեան կը դիմեն. հետամուտ են նոյն իսկ Ասիական Տաճկաստանի Հայերն և ուրիշ քրիստոնեայնք ռուսացնել: Բայց այդ նպատակն յաջողութեամբ ի գլուխ հանե-

լու համար կը պարտաւորին անյապաղ ռուսացնել նաեւ Արարատայ շրջակայքը: Քանի որ Արարատ մնայ զուտ հայ, Տաճկաստանի Հայն ևս բնաւ չը պիտի ռուսանայ. ուրեմն երկուքին դէմ միանգամայն պէտք է դործել:

Գուցէ ոմանք ըսեն. զուտ երեւակայութիւն է ենթադրել թէ՛ Ռուսք մտադիր լինին ռուսացնել Ասիոյ Հայերն: Մենք կը խօսինք միշտ իրողութիւններն աչքի առաջ ունենալով, և ճանչնալով Ռուսաց համբերող, երկայնամիտ և ճարպիկ քաղաքականութիւնը, որոյ չորհիւ կը ձեռնարկեն ամենափոքրիկ միջոցներով մեծ նպատակներու հասնիլ: Ուրեմն թուենք մի քանի իրողութիւններ՝ որքանը որ մենք գիտենք:

Մի քանի տարիներէ ՚ի վեր ռուս մամուլը կը պաշտպանէ Փոքր-Ասիոյ Նեստորականաց դատն, և կը պահանջէ որ ռուս կրօնաւորք մտնեն այդ ժողովրդոց մէջ, և աշխատին որ զանոնք ուղղափառ եկեղեցւոյ (ռուս եկեղեցի) զաւակ ընեն:

Բեդրսպուրկի կառավարութիւնը հետամուտ եղած էր Վանայ իւր հիւպատոսաց ձեռք այդ ռուսացումն յաջողցնել:

Ո՞վ չը յիշեր թէ՛ մի քանի տարի առաջ որքան աղմուկ յարոյց Վանայ մէջ ինն հարիւր ընտանեաց ռուս եկեղեցւոյ գիւղին ինչպիսի լուրն: Իրողութիւնն այն էր թէ՛ ռուս կառավարութիւնը կը յաջողէր համոզել հայերն՝ ընդունիլ Ռուսաց դաւանանքն, «եբե», որպէս զի ռուսական հովանին և պաշտպանութիւնն իրենց չորհուրէ, բայց «եբե» թող հայ միան, մինչև որ կատարելապէս վայելեն ամէն երկրային բարիքներ, յետոյ դարձեալ կը դառնան, կը լինին Լուսաւորչական: Ամէն ոք գիտէ թէ՛ ի՞նչպէս Խրիմեան Սրբազան յաջողեցաւ իւր հրգոր ազդեցութեամբ այս վտանգին առաջն առնալ: Վտանգն անցաւ, բայց Ռուսք չը յուսահատեցան, նորա յուսահատիլ չեն գիտեր. այժմ իրենց գործոց ուրիշ կեդրոն մ'ընտրած են. Կարին:

Կարեւոր ձեռնարկի մը պատրաստութիւնները կը լինին. ՌՈՒՍԲ ՄԵԾ ՎԱՆԲ ՄԸ ԿԸ ՀԻՄՆԵՆ Ի ԿՍՐԻՆ: Ամէնքս ալ գիտենք Այսօրոյ վանքերու պատմութիւնն: Այդ վանքերէն Պանդէլէյմն ամենահզօր վանքն Ռուսացն է. այժմ ռուս կառավարութիւնը ի Կարին կը խրկէ Պանդէլէյմն վանքի վարդապետներէ մի քանին, որպէս զի նմանօրինակ վանք մը հիմնեն անդ և աշխատին թուրքիոյ քրիստոնէից ռուսացման: Մենք տեսնեք մեր աչքն որ Ռուսք կը վնասուին հայ երիտասարդներ, որք ռուսերէն և հայերէն գիտնան, միանգամայն լաւ ճանչնան թուրքիոյ Հայոց բարքերն ու սովորութիւնները: Այդ երիտասարդք իբր թարգման Կարին պիտի երթան՝ Պանդէլէյմնեան վարդապետաց հետ անդ ռուս Էջմիածին մը հաստատելու:

Աւելորդ կը համարինք այլ ևս երկարել. եթէ մեր եկեղեցւոյ և ազգութեան չահերն ի Ռուսաստան վտանգի են. Ռուսք հետամուտ են նաեւ վերք մը բանալ Օսմանեան պետութեան մարմնոյն վրայ ևս: Այսպիսի պարագայի մը մէջ մեր Պատրիարքն եւ այն հայք որ ազգային գործոց գլուխն են և պարտաւոր են թէ՛ յանուն հայ եկեղեցւոյ և թէ՛ յանուն Օսմանեան Պետութեան շահուց մաքառիլ Ռուսիոյ քաղաքականութեան հայոց վերաբերեալ կէտերուն դէմ:

Երբ Մակար Սրբազան Կաթողիկոս ճանչցուեցաւ Ռուսաց կայսեր կողմանէ, թուրքիոյ Հայք կարող էին չճանաչել զնա, քանի որ նորա անունը չկար մեր եռապատիկ ընտրելից ցանկին մէջ, որ ընդունուած էր Էջմիածնաւորութեան ժողովէն:

Յայտնի է թէ Պոլսոյ ռուսական դեսպանատան համար ո՞րքան անախորժ պարագայ մ'էր Մակար Սրբազանի կաթողիկոսացումը մեր կողմանէ չճանաչել: Ինչպանք Մակարական մը չէր, և ոչ հակառակորդ մը Մեղքիսեղեկ Սըրբազանի, բայց անգամ մի որ Մակար Սրբազան վաւերացաւ Ռուսաց կայսրէ, զնա չճանաչել մեծ ցոյց մ'էր Արևելեան քրիստոնէութեան կողմանէ ընդդէմ Ռուսիոյ:

Այն ատեն դպրոցական խնդիրն էր յուզելու: Ըսին մեզ. մի՛ նախատեք Ռուսիոյ կառավարութիւնը, և փոխարէն պիտի փրկուին ձեր եղբայրներն որ Ռուսիա: Պիտի բացուին անոնց դպրոցներն, պիտի յարգուին անոնց կրօնական զգացումներն: Պիտի թողուին այնպէս ազատ՝ որպէս էին Միքայէլ Մեծ դուքսի կառավարութեան օրով բաւական է որ Էջմիածնայ դահու վրայ բազմի Հայրապետ մը, որ անվրասահութեան կեդրոն մը չը լինի Ռուսաց համար:

Չհեղինք ամէն նկատողութիւն, ամէն համոզում, ո՛ր և է արժանապատուութիւն, որպէս զի փրկենք մեր եղբայրներն: Եւ այսօր ո՞ր են այդ խոստումներն:

Ռուսաց կառավարութեան, Ս. Էջմիածնայ Սինօդին և մեր Ազգ. Ժողովոյ միջև միջնորդներն էին Ազգ. Ժողովոյ Ատենապետը, Կրօնական Ժողովոյ Ատենապետը, Քաղաքական Ժողովոյ Ատենապետը և Ս. Պատրիարքն:

Ո՞ր են դուքս այժմ. — Կամ զմեզ խաբեցին, կամ իրենք խաբուեցան: Եթէ այսպէս լռած մեկ անկիւն քաջուած մնան, իրաւունք պիտի ունենանք ըսելու թէ՛ զմեզ խաբեցին: Պարտաւոր են այսօր Պոլսոյ Հայոց գլուխն անցնիլ և աշխատիլ այնպիսի եռանդեամբ, ինչպէս աշխատեցան Մակար Սրբազանը մեզ ընդունելի ընել տալու:

Ազգն իրաւունք ունի սպասելու մի քիչ գործունէութիւն այդ յարգելի անձնաւորութեանց կողմանէ: Եթէ Ազգին և Պետութեան բարեւոյն նախանձախնդիր են, թո՛ղ գործեն:

S. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԱՐԿ ՀՐԱՍՐԱՆԱ

Երէկ Խառն Ժողովը գումարեցաւ Պատրիարքարան. Կրօնական Ժողովը ներկայացոյց պատճենն այն գրոյն զոր պիտի մատուցանեն Պէշիկթաշի գերեզմանատան խնդրոյն համար:

Քաղ. Ժողովը պահանջեց որ Կրօն. Ժողովը որչէ միանգամայն թէ՛ այնուհետեւ ի՞նչ պիտի ընէ: Կրօնական Ժողովը յայտարարեց թէ՛ այդպիսի որոշում մը տալու կարող չէ և թէ այժմէն ձեռնպահ կը մնայ եթէ հարկ է: Քաղ. Ժողովը կը պահանջէր որ Կրօն. Ժողովը ձեռնպահ չմնայ և համակերպի իրեն, Կրօն. Ժողովը չհամակերպեցաւ:

Ս. Պատրիարքն յայտարարեց թէ քանի որ համաձայնութիւն չգոյանար Կրօն. Ժողովոյ և Քաղ. Ժողովոյ միջև ինքն հրաժարականը կուտայ: Եւ ըստ այնմ Նորին Սրբազնութիւնն իւր հրաժարականը գրեց և յղեց առ Ազգ. Ժողովը: Այսօր ալ կը յղէ նաեւ առ Բ. Դուռն:

Նիստը շատ յուզեալ եղած է և Ս. Պատրիարքը մարած է:

Աւելի մտաւրամասն տեղեկութիւններն այս առուր Արեւի մէջ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ՄԱՍԻՍ»

ՏՖՂԻՍ, 3 փետրուարի

Թէեւ չարածներ են անցնում, բայց մեր հասարակական կեանքի մէջ էլ օրուան խնդիրը կառավարութեան դպրոցներում Հայոց կրօնի դաստաստութեան խնդիրն է։ Անցեալ նամակներից մէկում արդէն առիթ եմ տեսնել բացատրելու այդ հարցի հոգիներն եւ ստացած դրութիւնն։ Այդ դրութիւնը դէպի լաւ չէ փոխուել։ Երբ պաշտօնագէտ յայտարարեցին այդ մասին կրօնաւորներին, — մի խորտում ընկաւ։ Յուշմունք նկատուեցաւ։ Անկասկած այդ մասին կառավարութեան տեսութիւնը տեղեկութիւններ տուեցին Ռուսաց Ռուսական հարանապահ Հոգաբարձուին։ Հոգաբարձու Եանովսկին տեսնելով որ խնդիրը սուր կերպարանք է առել իրան յատուկ ճիշդութեան բաղադրականութեամբ, փոխեց գործերը՝ ձեւը։ Մի գեղեցիկ օր յայտնեցին հայ կրօնաւորներին որ կարող են շարունակել դաստաստել Հայոց լեզուաւ մինչեւ որ այդ հարցի մասին վերջնական որոշում գայ Պետերբուրգից։ Այդ որոշումն է, որին բերանաբաց սպասումն են հայերը։ Բայց բանից երեւում է, որ ոչինչ որոշում, նոր որոշում, խնդիրն չի էլ սպասվում։ Արդէն Թիֆլիսի կառավարչական դպրոցներում հայ կրօնաւորներն այլ եւս չեն դաստաստում։ Արշաւորդներն այլ եւս չեն դաստաստում։ Արշաւորդներն թիւ թիւ է առաջ գնում։ Մի բանի դպրոցներում տեղի է տեսնել հետեւեալն։ Այն միջոցին երբ պարագայով եղել հայ բաժանան հայ աշակերտների հետ, ներս է մտնում ուսուցանան ուսուցանողների խմբի հետ, եւ դաստաստում մէջ յայտարարում է հայ բաժանային, որ ինքը պէտք է դաստաստէ։ Հայ կրօնաւորները ստիպվում են դուրս ելնել դասարանից։ Ռուս կրօնաւորները յայտարարում են վարչութեան կողմից, որ իր դասի ժամանակ բոլոր հայերն էլ ներկայ պէտք է լինին, եւ ուրիշ բանով չպէտք է դադարել։ Ահա այդ ձեւով է սկսած ուսուցանել լեզուով դաստաստել։ Առայժմ հայ երեխաներին չեն ստիպում պատասխանելու։ Բայց գտնուել են երեխաներ, որոնք գլխաւորապէս ընտանեկան վատ արդեցութեան շնորհիւ, արդէն սովորում են ուսուցանել կրօնն եւ պատասխանում են, թէ մի բանի դպրոցներում դէպի այդպիսի հայ աշակերտներն ընկերների կողմից ցոյցեր են եղել։ Բայց այսպիսի դրութիւնից ոչինչ յուսալի բան չի կարելի սպասել։ Ռուսականներին վարչութիւնները ամէն միջոց գործ են գնում դադարեցնել, գործը խաղաղ ճանապարհով առաջ տանելու համար։ Ոմանք յայտ են տալիս, որ Էջմիածնից, Կաթողիկոսը շտապած կ'լինի այդ խնդրի հոգիներն պարզել եւ արգիլել ապա միջոցառական կարգադրութիւնն, որը դեռ եւս Բաղրամբեյի հաստատում չէ։ Բայց, որքան լուրեր են գալիս Էջմիածնից այսպիսի մի բան համարեալ թէ չէ եղել։ Ամէնքն էլ դիտում են, որ Կաթողիկոսը այդ մասին ոչինչ չէ կամենում անել։ Հատերն ասում են, որ նա ցանկութիւն էլ չէ տեսնել այդ մասին հարց առաջարկելու Պետերբուրգ։ Ուրեմն սպասելուց ինչ կարող է դուրս գալ։ Եւ մինչեւ երբ պէտք է Էջմիածինը սուտ յայտնել խորքի ժողովրդին, որն իր յոյսը դրած Վեհաբանի անդործունէութեան վրա, ինքն էլ ոչինչ չէ անում։ Իսկ այդ անդործունէութիւնն, ինչպէս յայտնի է ամէնքին, արդէն չափազանցութեան է հասել։ Մինչ-

ների բոլոր իրաւունքներն, եւ այդ ուսումնարաններն այժմ միայն անուանով կարող են ուսումնարան անուանուիլ։ Բայց Ձեր լրագիրներն եւ Ձեր Պատրիարքարանը պարծանքով յայտարարեցին թրքաւոր ժողովրդին թէ շնորհիւ Վեհ. Մակար Կաթողիկոսի վերադարձին բացուեցան Կաթողիկոսի հայ վարժարանայ դուռներն։ Այս բացուեցան բայց կողոպտուած իրանց ամեն իրաւունքներից։ Մակար Կաթողիկոսի արած վնասն իւր կաթողիկոսութեան այս կարճ ժամանակում մինակ այս չէ։ Նա նսեմացրեց բոլորովին Էջմիածնի ձեմարանն, որ Գէորգ երջանկային շատակ Կաթողիկոսն այնքան դժուարութեամբ կառուցել էր, հոգ տարել եւ բարձրացրել։ Նա առաջնորդական ասպարէզից հեռացրեց ընտիր եւ գործունէ այս առաջնորդներին եւ նոցա տեղ կարգեց այնպիսի առաջնորդներ, որոնց հովուութեանը մի ոչ-խոր յանձնելն անգամ փառահեղ չէ։ Նա Սինոդի անդամակցութիւնից հրաժարեցրեց արժանաւոր հոգեւորականներն եւ նոցա տեղ նշանակեց այնպիսի մարդիկ որ յայտնի եղած են իրանց աւաղակ գործունէութեամբ եւ արատաւոր բարքով, որպէս են Սարգիս Եպիսկոպոս եւ Կարապետ վարդապետ Տ. Գալստեան Եպիսկոպոս ձեռնադրեց այնպիսի վարդապետներ, որը վարդապետական կարգն ունենալու արժանաւորութիւնից լիակ հեռի էին արդէն եւ որ թէ՛ երեւանի եւ թէ՛ Էջմիածնի հասարակութեան մէջ լաւ համբաւ չէին վայելում։ Նա իւր կոնդակով արգարացրեց Սարգիս Եպիսկոպոսի գողութիւնն... որ մէկն ինչեւ միւսն առելով ատուան Մակարին եւ անիծում այն մարդոց որոնք Մակարի կաթողիկոսութեան պատճառ եղան իսկ նոքա որ փոքր ինչ ծանօթ են նորա կաթողիկոսանալու գործի մանրամասնութեան ասում են սրտամոռնորդ «Մեր ու մեր զաւակների մեզը թող ծանրանայ Պոլսի գործիչների շինքին որոնք ընդունեցին Մակարի կաթողիկոսութիւնն ու այսպէսով պատճառ եղան մեր ուսումնարանների բանդ ու բար լինելուն, պատճառ եղան մեր կրօնքի բռնաբարութեւնը»։ Ահա՛ այն անհեղինակ հաղարարութիւններն, որոնք օր օր անցնում են թուրքի վարչութիւններին։ Արդ ե՞՞ք իբրեւ մարդ, իբրեւ հայ, ամենեւին խղճի խայթ զի ո՞ւմ են իրանց սրտում Ձեր այն մարդիկ որոնք օր օր անցնում Մակարի կաթողիկոսութեան եւ պաշտպանեցին նորա ընտրութիւնը...

Ինչ հարկ ունայն խօսքեր ու սրտամոռնորդ բացազանչութիւններ, այժմ յայտնեմ յիշեալ ցաւալի պարագայի արդիւնքը։ Թիֆլիսից այստեղ ստացուած տեղեկութիւններից իմացվում է որ Թիֆլիզի բոլոր հայ բաժանայը որոնք կրօն էին գաս տալիս արքունի դպրոցներում, հրաժարած են իրենց պաշտօնից չուղելով ուսուցանել լեզուաւ դաս տալ հայ կրօնը հայ ուսանողներին։ Տ. ձեմի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 փետրուարի
Հալածականը վերջապէս դադար գտաւ ոտը հիւսիսում։ Հ. Խորէն Ստեփանէն, այդ հրաբորբը, աներկիւղ եւ Կաթողիկոսի հայ սերնդի կրթութեան գործի անձնուէր աշխատաւոր մի ամբողջ տարի Էջմիածնից հալածանք եւ քարոզ կրեց յետոյ, Պետերբուրգի հայ հասարակութեան խնդիրը չհաղթեց հոգ թողնուելիս դատաւարացի դաւաճ իբր հոգեւոր հովիւ։ Հայր Ստեփանէն ամէն կիւրակէ ժամասացութիւնից յետոյ եւանգելուն բարոյներ է խօսում։ Այնչափ եւանգելով, այնչափ ճարտար եւ գրաւիչ լեզուով է ճառում, որ մինչեւ անգամ ուսուստի-ճանաւորներ ներկայ են գտնվում քարոզին եւ մի ժամ ոտքի վրայ լսում։ Հ. Ստեփանէնի գալուց ի վեր տեղիս հայ գաղթականութեան մէջ կարծես ազգային յարաբերութիւնն աւելի է մոտեցնուել։ Բայց թողում այս եւ գտնել ուրիշ խնդրի։
Փափաքում էք խնայել թէ յիշուի՝ ուսուստի կառավարութիւնն հրամայել է որ այսուհետեւ պետական դպրոցներում հայ երեխաները չեն սովորուի։ Դժբաղդաբար անհերքելի իրողութիւն է այդ։ Այս տեղ կենտրոնական կառավարութիւնն ամեն վրատահալութիւն եւ ապահովութիւն ստացել է Կաթողիկոսի կառավարութիւնից այն մասին թէ մեծ դժուարութեան չափով հանդիպին եւ թէ ամէն ինչ զարգացնելու գլխի պիտի դայ։ Ահա այս ապահովութիւնն ըստանալուց յետոյ ներքին գործոց եւ հանրային լուսաւորութեան նախարարութիւններն կազմելով բարձր նիւթի դպրոցներում հայ ուսանողներին հայ կրօնն ուսուցանելու գաւառ ծրագրին, ուղարկած են Կաթողիկոսի տեղական շրջանի հոգաբարձու Եանովսկին գործադրել տայ յիշեալ հրամանն այդ ծրագրի համապատասխան։
Այս մասին մի պաշտօնագիր էլ ուղարկել են Մակար Կաթողիկոսին։ Թէ այս տեղ եւ թէ Կաթողիկոսն այնպէս են կարծում որ Մակար Կաթողիկոսը նոյնպէս անհոգ եւ անապրքէր պիտի մնայ ինչպէս որ անհոգ մնաց դպրոցների խնդրի ժամանակ։ Այդ Կաթողիկոսն իւր փառասիրութեամբ բանդ ու բար արեց Կաթողիկոսի հայ ուսումնարանները

ԲԺԺԿՆԵՐՈՒ ՀԱՐՑՈՒՑԻՔ
ԲԱՌՏԻՆԱ (Գորսիքա), Բնական հանքաջուր երկաթախառն, թթուային, կազային, ամենազուղու դարման ընդգէմ արեան տկարութեան, դեղնութեան, տեղի, ստամոքսի ցաւերու, եւ արեան նուազութեան յառաջ եկած ամեն հիւսնդութեանց։
ՀԱՆՔԱՅԻՆ ԲՈՂՈՐ ԶՈՒՐԵՐԷՆ ԳԵՐԱՋԱՆԸ
Հանքին տէրն է Զ. Մոլինաուի, 2, Պոլսի փողոց, Մարտիկաւ Կ. Պոլսի մէջ գործադրել են Գ.Ս.Ս.Ս.Ս.Ս. եւ Բ.Ն.Գ.Ի.Բ.Ի.Բ.Ի. Լատա խան, 4, Մաքսի փողոց, Ղաթիկաւ Կը ծախուի Գլխաւոր զեղարանայ մէջ։

ԱՂԶԿԱՆ ՄԸ ՕՐԱԳԻՐՆ

Բարեկենդան, Սիմեոն Ծերունին նամակն. — Բարե պահք եւ հին բարի ժամանակն. — Առաւ Միս-
թիկէն եւ Հայ մայրն. — Առ Նուրանիս. — Պ. Բա-
լանթարեանցի դատարանութիւնն:

Փետրուար 16

Սիմեոն Ծերունին այցելութեան եկաւ մեզ
երէկ գիշեր: Քիչ է Սիմեոն Ծերունին. քիչ
պիտի հարցնես ինձ հետաքրքիր: Եւ ալ չեմ
ճանչնաւ. եւ ոչ մէկերն իր կրօնք ճանչ-
նալ: Ծերունիի գիտելով ու ձեռնոցով մէկն
երկուքին մօտ երէկ գիշեր՝ զարկաւ մեր
դռան: Հայրս չարդիւնց որ ներս մտնէ:
Սրահին մէջ՝ ծայրի քիւնի վրայ նստաւ
կիսովին: Սիրտս կը տրոփէր: Ո՞վ էր: Թե-
րեւս ձկնավաճառ մ'էր, թերեւս մեծ վա-
ճառական մ'էր: Թերեւս տգէտ մարդ մը,
թերեւս մեծ գրագէտ մը: Թերեւս գաղա-
տան տնտես աղբարն էր, թերեւս Ազգա-
յին ժողովոյ Ատենապետն: Հայրս որդի-
սութիւնն հարցուց. զլսու շնորհալի խո-
նարհութեամբ մը պատասխանեց զիմակա-
ւորն: Հարցուց յետոյ թէ ուստի՞ էր: Ծե-
րունին ցոյց տուաւ Արեւելքն, եւ բաւա-
կան ժամանակ երեսն Արեւելքին դարձու-
ցած կեցաւ: Արեւելքն հարցուց. ինքնեկ հիւրն
ոտքի ելաւ, ոտքերն իրարու մօտ ուղիղ
կանգնեցաւ թեւատարած, եւ բաւական
ժամանակ խաչաձեւ մնաց այսպէս: Նստե-
լէ յառաջ, բացաւ ձախ ձեռքն, եւ միա-
ցնելով աջ ձեռքին երեք մատերն՝ երեքուց
զայն ձախ ձեռքին մէջ. «Թուղթ գրիչ
բե՛ր, Մեղանիա՛» հրամայեց հայրս: Գացի
գրասենեակս աւելի սրտատրոփ քան եր-
բեք: Գրագէտ մ'էր գիտակաւորն, եւ՝
բայրւածքն ու շարժուածքն մակաբերե-
լով՝ երկտարադ գրագէտ մ'էր ապագէն:
Պէտք է խոստովանիմ թէ նախ հոյելիին
առջեւ ներկայացայ: Գեղնած էր. մի՛ ըսեր
Տէտէմոնայի նման, Նուրանիա՛. մեծ թըշ-
նամանք կը համարիմ եւ այդ նմանութիւնն
ինձ համար, թէեւ մեծ հրաշակերտ մ'առ-
նուած ըլլայ: Բայց անհամբեր էի մտնելու
սրահն. իսկոյն թերթ մը նուրբ թուղթ եւ
ինձ նուիրած ոսկի գրիչդ առի եւ վազեցի
ներս: Գլխու յարգական կամ մանուանդ
խոնդ աղատական խոնարհութեամբ մը՝ շա-
հադդիս գլխակաւորն առաւ ձեռքէս
թուղթ գրիչն, եւ՝ ս'ընդին մօտենալով՝
սկսաւ գրել, գրչին անգամ մը նայելէ յե-
տոյ:

«Մեղանիա՛».

«Ծերունեայ զիմակին առի կը ծածկուի
եւրիտասարդի մը երեսը, զոր օր մը պիտի
համարուես: Իմ կ'մըս այդ է. եւ ես
այսուհետեւ ալ ամեն կամբերս պիտի կա-
տարեմ: Եւ ալ, այո՛, Բեզ նման հակա-
ռակ եմ նոր փիլիսոփայութեան, որ դմարդ
մեքենայ մը կը նկատէ, որ զմարդ
մեքենայ մը պիտի դարձնէ վերջապէս,
եթէ յաղթէ մեր դաւանած փիլիսոփայու-
թեան: Որոշականութիւնը (determinisme),
ենոր փիլիսոփայութեան այն ազեւտի
վարդապետութիւնն, որ բոլոր մեր գոր-
ծերն որոշիչ պատճառներու (causes dé-
terminantes) կը վերանայէ, կամքն առ-
ջինչ կը գրէ: Եւ որոշիչ պատճառներ չեմ
ընդունիր. եւ կ'մըս կ'ընդունիմ, եւ կ'ամ-
բի՛ կը հաւատամ՝ ինչպէս Ատուծոյ կա-
մեցայ որ Նուրանիան հետնաւ. կամե-
ցայ որ գրական ասպարէզն ինքնաւ. կամե-
ցայ որ այս ձմեռ գրասենեակիդ մէջ՝ ծաղ-

ւիւր մը ունենաւ. կամեցայ որ Երեմիայի
«Մահա՛ն անցիր. կամեցայ որ բանաստեղ-
ածութիւններդ ալ՝ արձակ դրութեանդ
անման՝ բուն իսկ անուանդ տակ օրագրաց
մէջ երեւնան. կամեցայ վերջապէս որ տանդ
մէջ զքեզ տեսնեմ, քու ձեռքդ. բան մը
երեւոյնիմ. կամիմ որ երես համար-
երես եւ երես օր մը պիտի համարես:
«Թէ ինչպէս յաջողեցայ, թէ ինչպէս կը
«Եւ յաջողիմ միշտ կատարելու կամքս, այդ իմ
«Գաղափարս է: Ծաղկոցիդ բոլոր թաղար-
ները՝ փափակ ձեռքդ ոտդ ունի առաջ՝
«Շաշտոյ արտասուքն ընդունեցան. բոլորն
«ալ ես տնկած եմ՝ այդ ծաղկներն. եւ
«Նուրանիայի նուիրած այս ոսկի գրիչն՝
«որով կը գրեմ՝ իմ ձեռքս գնուած է: Կը
«զարմանա՞ս: Կամեցայ թեան հրաշքերն
«եւ ասոնք: Այսպէս կամեցայ, այսպէս
«ըրբի. կ'մըս, այո՛, հրաշագործ կամքս Մար-
«դուս մեծութիւնն՝ ինձ համար՝ ո՛չ իր գի-
«տութեանն կը շարժուի, ո՛չ իր զգացումն,
«եւ ո՛չ բանէ, բայց միայն իր կամքս զօ-
«րութեանն: Կամք ունեցող անհատը, կամք
«ունեցող ազգը կը տիրէ: Դաշոյնէն սուր,
«թիւղ անթիւն հզոր է կամքը: Եւ անարգ
«մեծապէս աւելի անարգ է կամք չունեցող
«մարդը, կամք չունեցող ազգը: Այսպէս է
«այսօր մեր ազգը, Հայ ազգը: Վա՛տ ազգ:
«Թաւա՛նք կու տայ իր եկեղեցականներուն՝
«որովս զի օրի դեռն. թողա՛կ կու տայ իր
«ազգապետներուն՝ որովս զի ազգամլաս
«դատերու համար փաստարաններ գտնեն:
«Ենչո՞վ ապրեցանք մինչեւ այսօր. — Արօն-
«աբով Արօնաւորը խաչակիցեց, ու Սատա-
«նան հալածեցաւ: Արօնաւորն այսօր՝ երբ
«վտանգի մէջ անանէ կրօնքը՝ կը հարցնէ
«աշխարհականաց ժողովին թէ պէ՞տք է
«խաչակիցել... Տե՛ս մինչեւ ո՛ւր ի՞նչ
«է կրօնաւորը: Ռուս լեզուաւ աղօթենք.
«բայց ինչ լեզուաւ անիծենք. հայ լեզ-
«ուաւ՝ Ո՛հ, պէտք է Հայ լեզուաւ աղօթենք
«եւ Ռուս լեզուաւ անիծենք... մեր մատ-
«նի՛ չնրբը: Գրէ՛, Մեղանիա՛. կամք քարոզէ՛:
«Կամքն փիլիսոփայութիւնը քարոզէ՛ կա-
«նանց. կամք աղօթէ՛ երկու սեռին ալ: Բա-
«ւական չէ որ Հայուն հիւր սիրային կամ բա-
«րոյական վէպ գրեն. բաւական չէ որ Հա-
«յուն հիւր աղջկանց դատարարութեան հա-
«մար չուկաներն ու տուները չընկնէ զրամ
«հաւաքեն: Պէտք է որ Հայուն հիւր գրեն աղ-
«գայնէ՛ մէկեր՝ ինչպէս են Ռաֆիի վէպերը.
«պէտք է որ Հայուն հիւր ազգային գործոց
«ալ մասնակցին, ազգային գործոց համար
«ալ տուն ու շուկայ պատին: Տոնակ ի ձե-
«ռին փողոցներն ինչպէս աւելի՛ Եղիշէն ի
«ձեռնին պէտք է որ Հայուն հիւր Պատրիարքա-
«քան երթան, Վահագն երթան, եւ մեր
«ազգապետաց կարգան թէ ինչ կը գոր-
«ծէին մեր հին վարդապետը, Հայաստան-
«եայց բազմերախ Հայրապետը... Գիմա-
«կիս տակ կու լամ... Հայութիւնն այս-
«պիտի բարեկենդան մը դեռ անցուցած
«չէր... Ինչ օգուտ ունի եկեղեցականն,
«եթէ աշխարհականն անոր վրայ պիտի հսկէ
«որովս զի չլսածա՛ն եկեղեցւոյ անթիւնը,
«եկեղեցւոյ իրաւունքները: Բոլոր գնդա-
«սեղներդ, բոլոր ասեղներդ ժողովէ՛, Մեղա-
«նիա՛, ձեր ասեղներն ամենքն ալ առէք,
«Հայուն հիւր, եւ եկէ՛ք: Կարելի աւելի օգ-
«տակար, կարելի աւելի առաքինական, կա-
«րելի աւելի երկայնի գործ մը ունիք ը-
«նելիք. պիտի ծագիկէք մեր եկեղեցակա-
«նաց լեզուն, պիտի ծագիկէք մեր եկեղե-
«ցականաց ձեռքերն, անոնց որը հայրենա-
«սիրութիւն չունին, անոնց որը կամեցողու-
«թիւն չունին: Դա՛ք կամք ունեցէք անոնց

«տեղ: Կամեցէ՛ք փրկել Հայ եկեղեցին, որ
«ի վտանգի է: Դուք մեր եկեղեցւոյ դրան
«առջեւ կեցէք, եւ ալ ո՛չ քիչ պիտի հա-
«մարձակի ձերս մտնել մեր եկեղեցիէն: Հայ
«կրօնաւորէն թոյլ արարած չը կայ այսօր.
«Թո՛ղ Հայ կրօնական հզոր էակ չըլլայ յաւիտե-
«ական...»

Սիմեոն Ծերունի:

Սեղանին առջեւէն ելաւ զիմակաւորն,
եւ ետ գնաց, եւ՝ դրան առջեւ խոնար-
հութիւն մ'ընելով՝ անհետ եղաւ: Կայծակի
արագութեամբ կ'ընթանար գրիչն, եւ կը
գրէր տեղոյս ձեռքով, տեղոյս հոգւով:
Սեղանին շուրջ վազեցինք. գրին անձանթ
էր մեզ: Հայրս զիտոգութիւն ըրաւ որ՝ ա-
մեն պարագայի մէջ՝ մեծ գեղագիր Եւգ-
մենեան Կարապետին աշակերտած էր զի-
մակաւորն: Անհամբերութեամբ կարդաց
մայրս՝ ամեն մէկ բառի գոյն փոխելով՝ այդ
գրին, որ իւր աղջկան կ'աղաչէր: Ո՞վ էր
այդ երիտասարդն, ոյր խորհրդաւոր եւ
անվրիպելի ներդրութեան երթարկուած
էի յանգատս. այդ երիտասարդն, ոյր ար-
տասուք թացած էին իմ թաղարներու հոն.
այդ երիտասարդն, որ ուղղակի կամ ա-
նուղղակի պատճառ եղած է որ Նուրանիան
ուրիշ գիւղ փոխադրուի եւ մեր փոխա-
դարձ Օրագրութիւնն սկսի: Ո՞վ է այդ ե-
րիտասարդն, որ համարձակեցաւ տունս
մտնել, որ համարձակի թերեւս օր մը զը-
րասենեակս մտնել. որ կը համարձակի պըն-
գել թէ չըթուէր իր այտերուն պիտի...
Միթէ քո՛ւն եմ. երա՞զ մ'է գոր կը տես-
նեմ. վէ՛պ մ'է գոր կը կարգաւ Ո՛հ...
Բայց ո՞վ է Սիմեոն Ծերունին: Անկարելի չէ որ
զիմակաւորն ըրած ըլլայ ամեն ինչ. որ կը
յայտնէ թղթոյն մէջ. այլ կարծեմ թէ երեք
պայմանք անհրաժեշտ են այդ գործոց կա-
տարման համար: Պէտք է նախ որ Եւրոպա-
գացած, Եւրոպական կենաց ծանօթու-
թիւն եւ մեծ փորձառութիւն ստացած ըլ-
լայ. պէտք է ապա որ հարուստ ըլլայ. այ-
նուհետեւ պէտք է որ յափրացած եւ ան-
սիրտ էակ մ'ըլլայ, որովս զի լոկ գուար-
ձութեան համար այսպիսի քննակներ նիւ-
թէ եւ անոնց գործադրութեամբ ժամա-
նակ անցնէ — ինձ հետ կենակցութեան
փափաքող պարկեշտ երիտասարդ մ'ուրիշ
կերպ պիտի վարուէր: Սակայն ինչ ալ ըլ-
լայ, կամ ինչ ալ չըլլայ, այդ երիտասարդն
հայրենասէր մ'է: Ազգային վերջին աղետա-
լի դէպքերն անհուն ազգեցութիւն ըրած
են իր սրտին վրայ: Կը հաւատամ որ՝ գը-
րած պա՛նուն՝ իր ծիծաղալի մ'զիմակին
տակ անձանթին իրօք լացած ըլլայ կղերին
անկման վրայ, մեր ազգային-կրօնական ի-
րաւանց կորուսեան վրայ: Եւ Սիմեոն Ծե-
րունին ինչպէս կը գրգռէ մեր սեռն, Հայ
իգական սեռն: Արդարեւ, մեք Հայուն հիւր
տակաւին մեքենական գործ մը կը կա-
տարենք գրէթէ: Այրերէն ստակ ժողովել
եւ այրերու ընկերութեան մը զայն յանձ-
նել: Ահա մեր բոլոր գործն, երբ արեւ
որ կը տնօրինեն բոլոր վարչական գործերն,
երբ նոքա կ'ընթան Հայաստան իրրեւ քա-
րովիչ եւ իրրեւ ըննիչ: Արե՛ք ըստ Սիմեոն
Ծերունեայն՝ լաւ չեն կարող վարել ազգին
նաւն. անդ նոց շուրջ կը գեղեցինք: Սի-
մեոն Ծերունին հաւատք ունի կանանց վրայ.
զմեզ կ'երգուենցնէ մասնակցիլ ազգային
գործոց վարչութեան, զմեզ կը կոչէ պահ-
պանել տաճարն, հսկել սրբութիւն սրբոցն
վրայ, եւ չը թողուլ որ օտար ձեռք մը
ժտի մ'ընենալ երբեք մեր դարաւոր, երիցս
երեսնիցս նուիրական իրաւանց: Այս հրա-

էրին անտարբէր պիտի մնային: Պէտք է ֆրանսերէն լեզուն արտաքսենք Հայ վարժարաններէն: պէտք է պատուենք և մեր սրահներէն դուրս նետենք Ֆէլա-ճն, ժէլ Պլան, Իլլե-սոս-ֆոն: Հայ երեք մենք հայերէն կարդանք, Հայ աստուածոց երկրպագանենք: Գետինն անցնին Հիւզմանին դի-ցազուններն ու Տօտէին դիւցազուններն, որք մեր միտքն ու մեր գլխոյն յաւէտ կը գրաւեն, մեր քնոյն մէջ ու մեր արթնութեան մէջ: անիծեալ ըլլան Բարիլեան նորաձեւութիւնը, որք կ'անձիտեն զմեզ մարմնապէս ու բարոյապէս: Ո՞վ կը հիւանայ մեր վրայ, եւ ո՞վ չը հիւանար Քրիստոս Նիկողոսեանի նկարագրած գաւառացի Հայ կահանայ վրայ: Անկարգաւարտութիւնը պիտի Լայութիւնն ա՛յն օրէն, ուր մենք կամենանք իբրեւ Հայ ապրել, մեր Հայունքս կամենանք ուրեմն: Ես ալ կամայ հրաշագործութեան կը հաւատամ՝ Սիմէոն Մերուհոյն նման:

նոյն 17

Այսօր Դաւիթ Աղան եկաւ: հասկցար, մեծ մօրս Դաւիթ Աղան: Գիտես՝ որ մեծ պահոց առաջին կամ երկրորդ օրն անողա-ձառ այն հինաւուրց բարեկամն այցելու-թեան կու գայ մեզ՝ բարի պահը մաղթե-լու: Հին մարդերէն սմանք դեռ կը կատա-րեն այդ կրօնաբարձաբարձական այցելու-թիւնն: Հին մարդերէն սմանք դեռ պահը կը պահեն: Դաւիթ Աղան ալ գիտես՝ պա-հոցներէն, կամ՝ նոր բառով՝ պահպանողա-կաններէն է: Մերուհոյն ի յարգանս՝ ու-տիքի կերակուր չենք դնիր սեղանին վրայ, եւ Դաւիթ Աղան գոհ կ'ըլլայ: «Ձըլլայ որ վաղն ալ պահը բռնէք» կ'ըսէ սեղանէն ել-նելով: «մէկ օրը ձեզի համար կ'օգտէ: Ի՞նչ ընէք: մեր ժամանակի նախնանքը չի կան հիմայ: Մեր ժամանակը վաթս, ճեպալ, լեւաթոս, քոսէ, գաղղիներէն, ընկերութիւն, հանգանակութիւն, ասանկ բաներ չի կային: Իմ աղջիկներուս ամենուն ալ բռնել կու տայի: բոլոր մեծ պահը կը բռնէին, բա-նիկ մը չէին ըլլար: Պատճառն ալ ան է որ՝ գործ կ'ընէին: Մարերին ինչպէ՞ր բաժնած էր մէջերին: մէկը կ'աւելէր, միւսը հորէն քուր կը քաշէր, մէկալը կը սորէր, մէկն ալ կ'ըրակուրին կը նայէր, կարկուտքն ալ ու-րիշ մը կ'ընէր: Խաղալը փոխել կու տար լու-սահոյին: աւելը վաղը ուրիշ մը կ'ը-նէր, կերակուրն ուրիշ մը: ասանկով ամենքն ալ ամեն բան կը սորվէին: Օր մը հրանայ չեղան: մարդ ենք, բիշ մը քիթերին կախէին նէ, լուսահոյին տալ-բակ մը խոտ սնէր, կը հանէր, եւրբեք կը քշէ: Ի՞նչ՝ աղջիկս առտուն լուսա-լի պէս էր հիւանդը, նորէն իր գործը կ'ընէր: Խա-ղա ժամանակ կ'ընէր: ասով մէկտեղ բա-րակ բաներ կը բանէին, ցեւ, քեղեմ, ան-վաթ, կարի մաքինա չի կար: իրենցմէ աղէկ մաքինա՞ կ'ըլլայ: ԲԵՆԵՐ ԲԵՆԵՐ, աղ կարի մաքինան չիտակը քաշուելու բան չէ: Կ'ը-դալ ալ չի կար: է՛հ, Սաղմոս մի կարդալու է: Աղջիկներուս հինգն ալ ժամանակին կարգեցի: փեսաներս իրարմէ աղէկ: մէկն ալ քրթաւ: չուցեց: Թոսներս քրթաւ: պէս են: Բա պիտի խանձուին: աղջիկ ու մանչ դպրոց կ'ընէին: գիրքը ձեռնարկուն չեն ձգեր: Կանուխ կանուխ, ինչ հասկնամ: մէկն ալ չի կրնար կոր օր մի պահը բռնել: տեսա՞ր մի ուսմանք: Մէկ երկու տարի կայ՝ մեր զեղը Մոսկովի Հայ մը եկաւ, գլխոց մը բաղաւ, շարքով երկու անգամ տղաքը պտտելու կը հանէր: ընտո՞ր Ժէ՛կ կ'ընէին: հո չէ՞ցէ, աղաքը բիշ մը ԲԵՆԵՐ ԲԵՆԵՐ:

ըլլան: Մեր ուսումնականները ըրին չըրին մարդը գեղէն փոխացոյցին: Ես սա՛ ԲԵՆԵՐ ԲԵՆԵՐ որ Մոսկովիին դպրատունին տղաքը մէկալ դպրոցին տղոցմէն արթնէին: Ա՛ն գիտեմ որ՝ Մաղա-Պէն ըսածին պէս՝ աս ճամբան չ'ընէին: Մեր հին ժամանակը շատ աղէկ բաներ կար, անոնք նորէն ձեռք առնելու է: Մայրս միշտ երկիւղածու-թեամբ մտիկ կ'ընէ Դաւիթ Աղային խօս-բերուն: Դաւիթ Աղան գոհ կ'ըլլայ եւ կը զարմանայ, որո՞հետեւ ուրիշ ուսեալ կու-նայք շատ անգամ ծիծաղած են իր վրայ: Դաւիթ Աղան չը մեկնիր առանց ինձ քանի: մէ՛ջ կարգաւ տալու: Բաղձալէն: «Աղ-լրա-դիրն ուրիշ համ ունի» կ'ըսէ: զշատ գրա-բար տեղերը չեմ հասկնար ալ նէ, նորէն շատ համ կ'առնեմ: բարոյական կայ մէջը: այնուհետեւ կարծես որ մեր սուրբ նախա-հայրերն են որ կը խօսին: մաքուր լեզու է: պատուական գիրք է: Մնաց մնաց, մեր ժա-մանակէն աղ Բաղձալէն մնաց: Մեր հիմիւ նորեկն ուսումնականները ձեռք առգամ չեն առնիր Բաղձալէն: ինչո՞ւ: Բաղձալէն մէջը անանկ սիրահարութիւն միտահարու-թիւն գործ չունին, ճե՞ծքէ՞ք: բաներ չի կայ, հա՞յք բան չի կայ: չէնք չնորհը ուսումնական յօգուածներ գրուած են, մեր հին սուրբ նախահայրք վրայ լիովին տե-ղեկութիւն կու տան: ա՛խ, էլէ՛ք էլէ՛ք ան Հայր Աղանդը: Ես իրեն ուղարկեմ հոգիս կու տամ: Եւ Դաւիթ Աղան ձեռքս կ'առնէ Բաղձալէն, ալ ու ձախ կը դարձնէ: հիաց-մամբ, կը համարէ զայն երկիւղածու-թեամբ, զայն արտասուօք կը թանայ: եթէ հնար ըլլար պատկին մէջ պիտի մտնէր եւ ալ դուրս չը պիտեղէր: Բայց ո՞վ է ՍԵՂԵՆ ՄԵՐԱՆԷՆ:

նոյն 18

Մայրս այսօր յանկարծ կարս ձգել տը-ւաւ, եւ իր գրքատան բանալին տուաւ, բտելով: «Գիտե՛ք Մի՞քիւն: Վար բեր: Գի-տես՝ որ աստիճանին վրայ է: Երբորդ» Այս «Երբորդ» բառն ահագին կապարի կտորի մը ծանրութեամբ ինկաւ սրտիս վրայ: Հօր-մէս բաւական հայրենասիրութիւն առած եմ: Մայրս նախապատուութիւն կու տայ ի-մաստասիրաց: Իւր երկու գրատանց ալ ու-սածին յարկերն իմաստասիրը կը գրաւեն: երկրորդ յարկերն աշխարհաբարձացի գը-րագէտը: երրորդ յարկին վրայ են հայրենա-սէր հեղինակը: Անհամբերութեամբ վար առի Մի՞քիւն: արտասուածով աչօք դիտեցի պահ մը մեծ հայրենասէր բանաստեղծին պատկերն, եւ գիրքն առի վար իջայ: «Դաւիթ» ըսաւ մայրս «Դաւիթ» պէն-նէր: Գիրք (Livre des pèlerins polonais) Երբ երբորդ Գլխոյն հասայ, մայրս ինչ ոչ նաւագ յաղագեցաւ, ինչ որ անհուն բերկ-րութիւն ազդեց հայրենասէր հոգւոյս: «Եւ դուք գերեզմանէն դուրս պիտեղնէք: քանզի հաւատացեալ էք և սիրով ու յուսով լցեալ: «Դուք գիտէք որ առաջին մեռեալն՝ զոր Քրիստոս ի կեանս վերափոխեց՝ Ղազար-սն է: «Եւ Քրիստոս ո՛չ գորովար մը յարոյց, ո՛չ խոտաւաւէր մը, ո՛չ վաճառական մը, այլ Ղազարն: «Եւ Սուրբ Գիրք կ'ըսեն թէ Քրիստոս սիրեց զայն: եւ թէ միակ մարդն՝ ոյր վրայ Քրիստոս արտասուեց՝ Ղազարոսն եղաւ: «Եւ ո՞վ արդ, համարէն ժողովրդոց մէջ, նման է այսօր Ղազարոս:» Հէ՛ք Բոլոնիա, Հէ՛ք Ղազար, դեռ եր-կա՞ր արդեօք պիտի սպասեա Քրիստոսի, որ յարութիւն տայ քեզ, մեծ ժողովուրդ ի գերեզմանի:

Այդ գլխոյն վրայ մայրս փակել տուաւ Մի՞քիւն: Վար եւ ըսաւ: «Դուք ինչ բարեբա-տիկ ես, Մեղանիա: զուտ Եւրոպական դաս-տիարակութիւն մը ստանելով, ես զուրկ եմ հայրենասիրութենէ: Դու բարեխառն դաս-տիարակութիւն մ'առիր: Արդեօք թէ հայ-րենասիրութիւնն ի՞նչ մեծ յատկութիւն է այսօր Հայունց մը վրայ, և շատ կը սիրես հայրդ՝ որ հոգւոյդ մէջ դրաւ այն սրբազան հոգին: Եթէ ես ալ ճշմարիտ Հայունցի մ'ըլ-լայի՝ որպէս ճշմարիտ Հայ մ'է հայրդ, դու հոռաւիթ մը պիտ'ըլլայիր: գրիչովք անհամե-մատ ազդեցութիւն պիտ'ունենայիր Հայ ի-գական սեռին վրայ: Բայց ի՞նչ որ չես կա-րօղ ընել առանձին, կրնաս ընել զայն ըն-կերութեամբ: Ընկերութիւններ գտիր քեզ: Նուրանիան այդ մասին չը կրնար օժան-դակել քեզ: այդ աղջիկն իմաստասիրու-թեան համար ծնած է, իմաստասէր ծնած է: Ձէ կարող ազգաց միջեւ խտրի կամ զանազանութիւն դնել: իրեն համար ազգեր չը կան, այլ մարդկութիւն կայ: Եւ մարդ-կութիւնն՝ Նուրանիայի համար՝ ի կարուստ կը դիմէ: Նուրանիադ յուսեմես է: Ձը կըր-նար գործել ազգին համար: մարդկութեան բարեոյն համար ալ անկարող է գործել: Հաւատք չունի: Ա՛ս է իր հոգին... Մի յուզուիր: Ես չեմ պարտաւեր մտերմու-նիր: Ես քենէ աւելի կը հասկնամ, հետե-ւաբար եւ քենէ աւելի կը սիրեմ զայն: Բայց իրօղութիւնն ա՛յն է որ այդ տարօրինակ աղջիկն ի միշտ Հայունցաց, ի միշտ Հայու-թեան պիտի գրէ ու գործէ միշտ: Քեզ մեծ աջակից մը պիտի ըլլար Օրիորդ Չօ-պանեանն, Օհրամուրի Հոգեւոր: Ի՞նչ գը-րիչ ունի, ի՞նչ լեզու, ի՞նչ հոգի: ՍԵՂԵՆ ՄԵՐԱՆԷՆ խորհուրդն իրեն եւ ուրիշ քանի մ'ընկերութեանց հետ կրնայիք իրագործել: պէ՛տք է որ այդ մեծ խորհուրդն իրագոր-ծէք: Պէտք է որ թերթ մը հիմնէք, Տիկին Տիւսարի տնօրէնութեամբ կամ հովանաւո-րութեամբ: որովհետեւ այդ կրնն աստ-ուածուհոյ դիրք մ'ունի Հայ ընկերութեան մէջ այսօր: Իր մէկ անկողին իսկ կրնայ կանգնել կամ քանդել Օհրամուրի: ու գոր-ծեցէք: Այո՛, այրերէն ստակ ժողովէ աւե-լի մեծ գործ եւ աւելի բարձր կոչում ու-նինք մենք: Պէտք է հսկենք, պէտք է ջա-նանք որ Հայ աղջկունք ազգային դաստիա-րակութիւն ընդունին: Ձեր լրագրոյն կրնաք քնարան դնել Սպարտացի մօր խօսքը: Վա-հանդէր ԲԵՆԵՐ Ի՞նչ փահանէր վրայ»

նոյն 19

Մի քանի ամիս: Այս քաղաքի քանդակ-լաւ զուարճացիք ես: դիմակ իսկ գրեք ես: Սր մը թերեւս գողակալ գողնաւ, մեկնոցակ հազնիս, եւ չըջիւ լրագրաց գրասենեակ-ներն՝ աշխատակցութիւնը իրենց ընծայե-լով: Աշխարհիս վրայ՝ գիտես՝ քենէ վեր ոչ որ եւ ոչինչ կը սիրեմ, Նուրանիա: Բայց ազգս ամեն բանէ վեր կը սիրեմ: Արդ, կը պատմ որ աղիտաբեր աղի եցութիւն մը պիտ'ունենաս դու նոր սերնդեան վրայ: կը զգամ որ բարոյական հիւանդութեան սեր-մեր պիտի ցանես Հայ ընկերութեան ծոցն: ուստի, կը բաղձամ ի սրտէս... կը բաղ-ձամ՝ իբրեւ Հոյունցի՝ որ Բարիք երթալու տենչդ ընդ հուպ կատարուի: Մտի՛ր Քր-ոսանական մատենագրութեան մէջ: արդէն Հայ լեզուին համար արդահատանը ունիս: պերճ ու նուրբ մտացդ համար շատ ազգա-ու շինական կը գտնես մեր լեզուն: Գրէ Քանաներէն, տարէ՛ք Քանանորէն: ախապ-եալ ընկերութեան մը բարոյական հիւան-դութիւնն աւելի զայրացուր անցեալ, ե-

թէ կրնա՞ս Գնա՛ Բարիպ, Գնա՛ Հիւզմանիդ
Հեա նոր հրապարակեցո՞ւմ ներկայացուցել
պէտքէս արտերն այն հոգեկան ու մարմ-
նական. Գնա՛ քու Ռիչարդիդ Հեա հայհոյել
եւ իր Պուգոնին հետ ծաղրել ինչ որ սիրտն
ու հոգին ունին ամենէն սուրբ, ամենէն
երկրպագելի: Գնա՛ Մօսկա Ռօլինայի հետ
քառաձեռն ածել դաշնակիւն վրայ եւ ի գիր
արձանագրել ապա ջիղերու երգն: Գնա՛,
Գիւլիանը որբ մնացին Պատրիսիէն և քեզ կը
կոչեն: Գնա՛, Սոլէնտալի տեղն այն այլա-
զան անսահման գրականութեան մէջ թա-
փուր կը մնայ: Գնա՛, Նուրանիա՛, անկ-
եալ հրեշտակը հոն են բոլոր: Գնա՛
Բարիպ, հոն ուր Աստուած չը կայ, հոն
ուր քուն չը կայ, հոն որ մարմինն իբրեւ
ստուգած կը պաշտուի, հոն ուր գը-
լուսը գետնի վրայ են, եւ ուր ոտը օդոց
մէջ, եւ ուր սիրտն ոտից տակ... Գնա՛,
մոլորեալ՝ Գնա՛, մոլորի՛չ: Այդ զգամ որ ես
իսկ ազդեցութեամբ կը մոլորիմ յանգալա՛
Գնա՛... Բայց ի քէն հեռի պիտի կրնա՞մ
ապրիլ ես Ո՛հ, ոչ. մնացի՛ր Պօլիս. չափա-
ւորէ խանդը, ամփոփէ թեւերդ. կամ մա-
նուանդ բարեւոյն սիրով վառուէ՛, բարին
ընդգրկէ՛, եւ հզօր աջակցութիւնդ ինձ շը-
նորհէ. Հայ իգական սեռի վերադարձման
համար:

Նոյն 21

Վաղ կեդրոնական վարժարանի մէջ տե-
ղի պիտուենայ Պ. Քալանթարեանցի ման-
կավարժական երկրորդ դասախօսութիւնն:
Անդրանիկ Էֆէնտին անցեալ կիրակի նա-
մակաւ հօրս հաղորդած էր իր տպաւորու-
թիւններն առաջին դասախօսութեան վրայ,
ուր Յօն աւելի ստորագրող դասատուք
եւ ԱՕէէ աւելի ունկնդիրք գտնուած են
երկու սեռէ: Այսօր միտքս եկաւ այդ նա-
մակին. հօրմէս առնելով պիտ'ընդօրինակեմ
ու քեզ առաքեմ զայն. թերեւս հաճոյք
պատճառէ քեզ, սրախօսութեամբ համեմ-
եալ գիր մ'ըլլալով: Կ'ուզեմ գտնուիլ երկ-
րորդ դասախօսութեան, եւ այսուհետեւ
կ'անոնաւորապէս, քանի որ մայրս այնքան
արտօնութիւն ինձ տուաւ: Դու ալ չէի՞ր
գար:

ՄԵԼԱՆԻԱ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

Օրթագրելով 20 փետրուար:

Անձնապատկերներն. — Յ. Ռաֆան և
գրական ծրագիրները. — Մեր հաքը. — Մենք ու մահ-
մէտականքը. — Հարամ բարեկեցան. — Բազմա խո-
րանի ստուգաբանութիւնը:

Թուրք գրագէտ Ֆուատ պէյ իւր անձ-
նապատկերութեամբ թերեւս մեծ ծառայու-
թիւն մը մատուց իւր հայրենեաց: Ֆուատ-
այի մի լրագիր՝ օր մը հրատարակած էր
վիճակագրութիւն մը ամէն երկիրներու
անձնապատկերութեանց, այդ ցանկին մէջ յի-
շատակուած չէր Թուրքիոյ անունը: Խմբա-
գիրը ծանօթութեամբ մը կ'ըսէր թէ՛ Թուր-
քիա այնքան քիչ քաղաքակիրթ է որ եւ ոչ
իսկ անձնապատկերներ ունի: Այս ստուգա-
նութիւնը կրնայ մինչեւ մէկ աստիճան զըր-
պարտութիւն համարուիլ, վասն զի տոտի
անտի մենք ալ ունեցած ենք փէլէլիքներ
որք մտածած են թէ բաւ է որքան ապ-
րած են:

Բայց այդ անձնապատկերներն անտես ան-
ցած են, իսկ այժմ Ֆուատ պէյի անձնապ-

ատկութիւնը կրնայ պատուաբեր համար-
ուիլ նոյն իսկ ամենէն աւելի նրբացած ազ-
գերու:

Պատկերացնենք բարեկամներ որք ինձ
յորդորեցին շատ ջծանրանալ այս նիւթին
վրայ:

— Արիւնն հրապարիչ է, կ'ըսէին, շատ
գրելով այդ դէպքին վրայ գուցէ անձնա-
պատկերութեան վախճաններ զարթուցանէք:

Կարծեմ թէ այս մտածանքութիւնն ա-
ւելորդ է. Հայոց վերնամիջին իւր նմանը
չունի բնական պատմութեան մէջ: Անե-
րկիւղ մենք կրնանք տոկալ ամէն տառապա-
նաց, բայց գնդապետի մը ծայրը մեզ սար-
սափ կ'ազդէ:

Սակայն անիրաւութիւն է այսքան յուռե-
տես լինել Հայոց մասին: Ո՛չ ապաքէն վեր-
ջին մի քանի տարիներու մէջ մենք ալ ու-
նեցանք երիտասարդներ ու երիտասար-
դուհիներ ոյք լաւագոյն սեպեցին անդրա-
շուէլ քան մըլիլ այս աշխարհիս մէջ:

Ձայս կը յիշեմ այժմ, զի աչքիս ա-
ռաջն ունիմ Յակոբ Ոսկան Էֆէնտիի նոր
հրատարակած մի տետրն ազգային դաս-
տիարակութեան խնդրոյ վերաբերմամբ:
Եւ սակայն փոխան այդ տետրին պիտի ու-
նենայինք այժմ ստուար հատոր մը եթէ
Տիգրան, Ոսկան Էֆէնտիի խեղճ տղան, անձ-
նապատկեր չլինէր: — Հայրիկ, կ'ըսէ եղբր շատ
անգամ Տիգրան, այդքան հմտութիւն ու-
նիս, այդքան փորձառու ես, ինչո՞ւ կը գո-
հանաս պզտիկ տետրակներով եւ ցան ու
ցիր բանաստեղծութեամբ: Հատոր մը հը-
րատարակէ որ անուանդ յիշատակ մը մնայ:

Եւ իսկան Էֆէնտի կը մտածէր արձա-
նագրել իւր յիշատակները. կէս դար է նա
ուսումնասիրած է ազգային կեանքն եւ կը
վայելէ գրելու գաղտնիք մը որոյ շնորհիւ
ինչ որ արտադրէ իւր գրիչը, կը գրծուի
մեր սրտերուն մէջ:

Նա պիտի պատմէր իւր զուգներուն,
իւր թոռներուն թէ ի՞նչ տեսած է յիսուն
տարուան մէջ, բայց Տիգրան մի օր կը
ձանձրանայ ապրելն եւ տարաբաղդիկ
հոյրը մթազգած սրտով կարող չէ Գրիչ
չարժել:

Եւ մեր թոռները գուցէ մեզմէ աւելի
ցաւին այդպիսի յիշատակարանի մը պակա-
սութեան վրայ: Ո՛ր գիտէ, իրենք ալ օր մը
պէտք պիտի ունենան իրենց հայրերու մա-
սին որոշ, յստակ տեղեկութեանց եւ ո՞ւր
գտնել զանոնք: Ո՛չ ապաքէն մենք այժմ
խարխալելով կ'ընթանանք եւր կը խօ-
սինք մեր անմիջական հայրերու մասին
եւ այնքան լաւ գաղափար մը ունինք ա-
նոնց վրայ որքան թերեւս չարժէ: Մեր
նախնեաց բեկորներն զորս այժմ կը տես-
նենք, մեզ շատ նպաստաւոր կարծիքներ
չեն հաղորդեր մեր պապերու մասին որք
այնքան ջերմեանդ էին եւ որք առանց
եկեղծութեան անկողին չէին մտնէր: Բայց
վերջապէս այդ մեր հայրերը չէին որ օր
մը պատրիարքը միասին առած կ'իջնէին ե-
կեղեցի եւ ձեռքերնին խաչին ու աւետա-
րանին վրայ գնելով: Կ'երգում էին այլ եւս
իրարու տուն չկործանել: Ինչ որ իրենց
արգելք չէր լինէր յաջորդ օրն աւելի վա-
տութեամբ աշխատիլ գիրար բնաջինջ ընե-
լու եւ մեզ այսօր աւերակներու տխուր
կոյտ մը նուիրել:

Բայց շատ չմեղադրենք մեր նախնիք.
երբ նօքա՝ կործանէին միմեանց՝ տունը,

մենք ալ — որովհետեւ այլ եւս չմնաց կոր-
ծանելու տուն — կը կործանենք ազգին
տունն: Որարտէն ի Վասիլոր բաժնի ձեռքին
կը մրցինք միմեանց հետ բորեւու այդ տան
հիմերն: Եւ կործանման ջանքերուն մէջ ո՞ր-
քան հոգեւտեղն կորով ցոյց կուտան նոքա
որք այդ տան նախախնամութիւնը լինելու
կոչուած են: Դեռ երէկ կը հաղորդէին թէ
մի եպիսկոպոս ի Ղարապաղ — Ռուսիոյ Հա-
յոց այդ միջնաբերդին մէջ — եռանդուն
սրտով կը աքնի օրպէս զի հայ աղայք այ-
սուհետեւ իրենց ազօթքի մէջ փոխանակ
Աստուած ըսելու Պաշտեն:

Եւ սակայն մեր սրբազանները թող չնե-
ղանան եթէ յիշեցնենք իրենց որ հակառակ
իրենց մաղթանաց մենք հաւատ ունինք որ
դեռ շատ դարեր Հայերը պիտի չարուա-
կեն Աստուած ըսել փոխանակ Ռուսաց
Պաշի: Եւ եթէ հարկ իսկ լինի, Ռուսիոյ
հայն աւելի պիտի բռնէ երթալ ազօթել
Մահմէտի մկրթի ըսն Ռուսաց Քրիստոսին
նուիրուած եկեղեցոյն մէջ:

Ժողովուրդի հոգին կը ցոլանայ շատ ան-
գամ անմեղ մանկանց զգացումներու մէջ:
Պատմութիւն մը առաջ բերենք ցոյց տալու
համար թէ ինչպէս այդ մանուկները բնա-
ծին զգացում մը ունին միշտ հեռի մնալ
օտարազգի քրիստոնեայներէ:

Ռուսիոյ պետական դպրոցներու Գիշա-
ւանքներու մէջ, զանազան կրօնից պատկա-
նող աշակերտք կ'աղօթեն — կամ թէ կ'ա-
ղօթէին — դպրոցի մէջ իրենց ազգային ե-
կեղեցականներու առաջնորդութեամբ: Տէր-
տէրն հայուն, մոլլան մահմէտականին, բոլոր
ուսանի: Մի քանի տարի առաջ, օր մը Բա-
գուի Գլխաւորին մէջ երբ կը հասնի աղօ-
թելու օրը՝ ժամն յորմէ վերջ աշակերտք
զօսանքի պիտի երթան, հայ տէրտէրը
կ'ուշանայ եւ չի գար. աշակերտք անհամ-
բեր են. ամէն մէկ բոպէ որ կ'անցնի կու-
րուստ մ'է իրենց դրօսանքէն: Փոքր ինչ եւս
կ'ապասեն եւ տեսնելով որ տէրտէրը չի
գար, կ'երթան խմբովին կը միանան մահ-
մետական տղայոց եւ կ'աղօթեն անոնց հետ
միասին, առաջնորդութեամբ մոլլային: Ա-
ղօթքը վերջանալու մօտ է երբ տէրտէրը
ներս կը մտնէ եւ ապա՛ծ կը մնայ հանդի-
սատես լինելով այդ տարօրինակ տեսարա-
նին: Միւս օրը քահանայն եւ դպրոցի տը-
նօրէնք միասին կ'երթան հայ տղայոց եւ
միասին դիտողութիւններ կ'ընեն թէ՛ ինչո՞ւ
համար չեն աղօթեր քրիստոնեայ ուսանե-
րու հետ եւ կը միանան մահմէտականաց:

— Պատճառը պարզ է, կը պատասխանեն
աշակերտք աներկիւղ կերպով: Եթէ այսօր
աղօթեցինք մոլլային հետ, վաղը դարձեալ
պիտի կարենանք մեր տէրտէրին հետ աղօ-
թել: Բայց եթէ աղօթէինք ուսն քահա-
նային հետ, միւս օրը պիտի ըսէր դպրոցի
տեսչութիւնը: «Տէ՛ր հայր, քու ներկայու-
թիւնդ հոս աւելորդ է. վասն զի մի եւ
նոյն քրիստոնեայ քահանայն կարող է թէ
Ռուսաց եւ թէ Հայոց օգտակար լինիր Որ-
պէս զի այս կարեկրութիւնը բոլորովին ջըն-
ջենք, միացանք Մահմէտականաց:

Եւ ահա՛ այսպիսի տղայոց է որ Ռուսք
այժմ կ'ուզեն ուսուցնել աղօթել տալ իրենց
նորանոր օրէնքներով: Բայց մենք կը յի-
շենք ինչ որ կ'ըսէր իրենց մեծ Ապոստոլն,
Եկատերինա Բ. «Աւելի դիւրին է օրէնք-
ներ գրել թուղթի քան մարդկային մօրթի
վրայ:» Եւ շատ Հայոց մօրթը միշտ անըն-
դունակ պիտի լինի իւր վրայ քանդակուած
տեսնելու այդ օրէնքները:

ՀԱՅԲ

ՆԻ ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Բ. (*)

Բայց բաւական չէ այդ հաստատուն ունենալ եւ նշանակել զգոյշ լինելն փրկութեան ապահով միջոցներէն մին է: Փարիլ եկեղեցւոյ եւ անոր «խիտ անտառէն» դուրս չեղնել, ահա՛ առ այժմ ինչ որ մեզ պէտք է: Ինչպէս լաւ ըմբռնած է այս ճշմարտութիւնը ժողովուրդի զաւակ աշուղները կ'երգէ:

Որովհետեւ ճարտարք եւ մանկուհի
կուգէ ձեռները քո արեւմտաւոր
խղճալի, քո տեղեկ սար ու ձոր կուլայ

Փախի՛ր այժեամբ, փախի՛ր լէ՛ լէ՛ որս-
կան է գալիս
Ձագուկներդ տխուր լէ՛ լէ՛, լալիս են
լալիս:

Ձորերը մի մտնի՛ր վտանգաւոր է
Որովհետեւ մանկուհի, այնտեղ սովոր է
Քարայրից խփելով քեզ կը գլորէ:

Փախի՛ր այժեամբ, փախի՛ր լէ՛ լէ՛ որս-
կան է գալիս
Ձագուկներդ տխուր լէ՛ լէ՛, լալիս են
լալիս:

Որովհետեւ գուժ չունի, կանէ կրակը
կամ քեզի կը խորվէ կամ քո գլուխը
ի գուր չի անցնիլ հրացանի գնդակը

Փախի՛ր այժեամբ, փախի՛ր լէ՛ լէ՛ որս-
կան է գալիս
Ձագուկներդ տխուր լէ՛ լէ՛, լալիս են
լալիս:

Դաշտումը չես ման գալ թէ մտածես լաւ
Քեզ կը վերադարձնէ ստանաւ մեծ ցաւ
Դուրս մի ելնի՛ր խիտ անտառից գուր չես:

Փախի՛ր այժեամբ փախի՛ր լէ՛ լէ՛ որս-
կան է գալիս
Ձագուկներդ տխուր լէ՛ լէ՛, լալիս են
լալիս:

Անհոգ ես չեմ դիտում ի՞նչ կայ քո մասին
Պրտովում են խեղճուկ լէ՛ լէ՛, անձիդ փախի՛ր
Գամիռներով լորսակներով միասին:

Փախի՛ր այժեամբ փախի՛ր լէ՛ լէ՛ որս-
կան է գալիս
Ձագուկներդ տխուր լէ՛ լէ՛, լալիս են
լալիս:

Ահա՛ այս անուր Երգերը զոր բարեկենդանի օրերը կ'երգէ ուսուսանող իւր աշուղին հետ, մինչ մենք ասդին ուրախ զուարթ կը ցատկենք ու կը պարենք:

Նւ որչափ պարեցինք: Նւ միթէ մեր պարտականութիւնը չէ՞ր հաբժ սեպել այս տարուան բարեկենդանին ու զրօսանքն, մինչ անդին կրօնք ու ազգութիւն կենթարկուին այնքան հաղածանաց: Ինչ մեծ տարբերութիւն մեր եւ նախկին մարտիրոս ազգի մը, Իտալացւոյ, մէջ: Համեմատութիւնն անտեղի թով չհամարուի: Հոգեկան սուգը, բուռն զգացմանց ծնունդ, ո՛չ մեծ ազգ կը ճանաչէ ո՛չ փոքր, ո՛չ երջանիկ, ո՛չ թշուառ: Ով որ սիրաւ մը ունի պէտք է զգայ: Ափրիկէի մէջ հինգ հարիւր իտալացիք կ'իյնան պատերազմի գաշտին վրայ եւ ամբողջ իտալիա սուգի մէջ կը մտնէ: Թագաւորը խորագէտ զգածեալ կը չորի սեղանի մը առաջ եկեղեցւոյ մէջ, եւ արտասուելով կ'աղօթէ իւր զինուորներուն համար եւ յաջորդ օրն ամբողջ իտալիոյ մէջ կը դադրին բարեկենդանի երգերը, խաղերը, պարք ու երեկոյթը: Հայրենիք սուգի մէջ է: Իսկ մենք: Մէկ ու կէս միլիոն հայք կը բռնաբարուին իրենց ամէնէն նուիրական զգացմանց մէջ եւ մենք կը պարենք:

Ինչ որտառու, ինչ մեծ հանդէս մը պիտի լինէր եթէ Նոր Թատրոնի դուռները

փակ լինէին մեզ համար բարեկենդանի օրերն եւ ամէնուրեք հնչուէր «Հայկական պարերն ու երեկոյթը դադրած են ազգային մեծ սուգին համար»:

Բայց ի՞նչ փոյթ, բարեկենդանի եկած էր եւ մենք ըսինք՝

Բարեկենդան եկաւ, խաղանք ու խնդանք:

Մեր հարք ալ կը խաղային ու կը խնդային, բայց վերջն իրենց համար մեծ պահք կար: Մեծ պահքի երկուշաբթի առաւօտ ամէն ոք կը ջանար կանոնաւորութեան երթալ: Ով որ առաջինը հասնէր եկեղեցին, այս էր աւանդութիւնն եւ դեռ շատերուն համար կայ այս աւանդութիւն, նա առաջինը կը գրուէր Աստուծոյ տեառակին մէջ: Քանիներ տեսանք որք առաւօտուն մութուն եկեղեցւոյ դուռն ափ կ'առնուին:

Ով այժմ կը յիշէ այդ հին աւանդութիւններն, ով պիտի յիշէ որ մը թէ մեր հարց մեծ մտաւանջութիւնն էր խորհիլ բազմա խորան ստուգարանութեան վրայ: Բայց որքան ալ հետզհետէ կը մոցուին հին յիշատակներն, յիշողները դեռ կան: Հետաքրքիրը այսօրմին թերեւս այս բառին ստուգարանութեան վրայ գաղափար մը ունենալ եւ կը քաղենք 1839 թերթէ մը, երեւելի մարտ 1ի թուէն ինչ որ Տէրոյնց պատուելի կը գրէր այդ բառի ստուգարանութեան մասին:

«Մեծ պահքն առաջին օրուան տրուած այս անուան ոմանք քաջալիք խորան կրտսեղաբանն: Եւ կ'ըսեն որ եկեղեցիները խորաններուն վարագոյրը քաջալիք եւ սեղանները գոյուած ըլլալուն համար այս անունն այն երկուշաբթի օրուան յատկացած է: Բայց թէ որ այս անունն պատճառատեան մը ըլլար նէ՛ բուն բարեկենդանին օրուանը տալու էր այս անունը: Վասն զի խորանները նախ եւ առաջ բուն բարեկենդանին օրը գոցուած կը տեսնուին: շարաթիրիկունքէ գոցուած ըլլալով: Ուստի մեզի մէկ ուրիշ ստուգարանութիւն մը աւելի յարմար կ'երեւի:

«Յայտնի է որ յայնորդ բարեկենդանին վերջին շաբթուն միս ուտելն կը կարգուի: Եւ այն կիրակիին «Բարեկենդան» կ'ըսեն: Եւ որքան ճիշդ բառական թարգմանութիւնն է հայերէն ժողովուրդը, եւ տաճկերէն է՛ Բարեկենդան, եւ այն կիրակիէն մինչեւ բուն բարեկենդան» եօթն օր նաւակատիքի կերակուր կուտեն: Եւ այն շաբթուան «Բարեկենդան» կ'ըսեն: Եւ որքան խորան անուանն ալ եւ կը գտնենք որ քաջալիք բառը՝ նոյն իսկ արաբացոյց «Բարեկենդան» է, որ ըսել է հետեզէն: Ինչպէս են ոսպն, օրհեստ, լուրիս, բրինձ, և այն հըն, տեղէնները որուն յատկացած է բարբառաւոր: Պատշաճ բառն ալ ասկէց կ'ելլէ որ հետեզէն ծախող ըսել է: Խորանն ալ պարսկերէն իւր բառին յոգնակաւն է, որ ըսել է ուտող: Ինչպէս նախորդ հոգ ուտող բառին մէջ: Եւ այսպէս քաջալիք բառն ըսել կ'ըլլայ, հընտեղէն ուտողներ: Կամ հետեզէն ուտելու օր: Այս ստուգարանութիւնը մեզի օրինաւոր կ'երեւի: Եւ յայտնի է որ մեր աշխարհաբար լեզուին կերպարտրուած ժամանակը մեծ Հայաստան Պարսից տէրութեան ձեռքն ըլլալով՝ պարսկերէն լեզուն ալ մեր այն ժամանակի նախնեացը ծանօթ էր: Այս բառիս գործածութիւնը զորոց մէջ տեսած չունիմք, որկէց կը գուշակեմք որ վերջին ժամանակները հետաքրքրած է»:

ՀՐԱԶԴԱՆ

Շուշի բերդն օգնութեամբ Հայոց պաշտպանուեցաւ 48 օր ընդդէմ Պարսից բազմաթիւ զօրքերուն: Սահմանազլխի այդ բերդը մեծ խոչընդոտ մ'էր Պարսից, եթէ Արաս-Միրզա կարենար գրաւել այդ բերդն, այն ատեն Ռուսք պիտի գտնուէին բաւական ծանր վիճակի մէջ: Արդէն Ղարապաղի Մահաթի խան որ այնքան յարգ եւ պատիւ գլուխ էր ուսաներէն եւ զօրապետի աստիճանի բարձրացած, կ'ապստամբեցնէր Ղարապաղի մահմետականներն որոց կը միանար Վրաց Ալեքսանդր Իշխանազն եւ Ռուսք ծանր կացութեան մէջ կը գտնուէին:

Պարսից բանակի հրամանատար զահաժառանգ Արաս-Միրզայի առաջապահ զօրքերն իրենց առաջնորդ ունենալով Արաս-Միրզայի երէց որդի Մահմադ խան եւ Ամիր խան Սարտար, տիրած էին Գանձակի եւ կը յառաջանային դէպ թի՛քի: Օգոստոսի 4ին Ռուսաց զինուորներն առանց Մագաթովի թի՛քի ճամբայ ելան թշնամուոյն առաջն առնելու համար: Իշխան Մագաթով շուտ հասաւ, անցաւ զինուորաց զլուխն եւ յարձակեցաւ ընդդէմ Վրաց Ալեքսանդր Իշխանազնի վրայ, ցիր ու ցան ըրաւ նորա զինուորներն եւ իշխանազն գնաց ապաստան օրոնել Շամբօրի լեռներն:

Այդ յաղթանակէ վերջ իշխան Մագաթով սեպտեմբերի սկիզբներն հասաւ Շամբօր գետի մօտ, որոյ աջ ափին վրայ կ'ըստպանէր Պարսից զլուսաւոր բանակն օրուն միացեր էին Ղազախի եւ Շամախիի ցեղերն: Այդ բանակին եւ այդ բազմութեան կ'առաջնորդէր Շահի փեսան Ամիր-խան: Վարտարն իրեն հետ ունենալով Արաս-Միրզայի երէց որդին:

Իշխան Մագաթովի զինուորները սակաւաթիւ էին, բայց զինուորաց անձնակազմ հաթիւնն, իշխանին ահարկու անունն եւ նորա պատերազմական ճարտարութիւնները բաւական էին յաղթանակն ապահովելու: Մագաթով շատ ճարտար էր պատերազմական հնարքներ ստեղծելու մէջ: Այս պատերազմին պատրաստեց մի ահապին սայլ, որոյ վրայ կապուած էին թնդ անոթներ՝ որք կ'որոտային: սայլն իբր մի հրէշաւոր մեքենայ կը յառաջանար բանակին առջեւէն հանդարտ ընթացքով, սարսափաշար թշնամիները կը կարծէին թէ այդ միթխարի հրէշն իւր բերնէն անընդհատ կը ժայթքէր կրակ ու գնդակներ:

Պարսիկները չարաչար կերպով պարտուեցան: Գլխաւոր հրամանատար Ամիր-խան Սարտարն սպաննուեցաւ, Արաս-Միրզայի որդի Մահմադ-Միրզան փախստական ազատեցաւ և բանակը ցիր ու ցան եղաւ: Մագաթով հաղածեց փախստականներն որպէս զի Գանձակի առջեւ կենալով հայերը չենզեն: Սեպտ. 4ին Մագաթով մտաւ Գանձակ եւ մեծ հանդէսով ընդունուեցաւ ժողովուրդէն ընդունուեցաւ ժողովուրդէն:

Այս յաղթանակէն յետոյ Մագաթով կը պատրաստուէր երթալ ազատել եւ Շուշին, երբ յանկարծ ուս զօրավար Պատկեւիչ Գանձակի գալով ինքն ստանձնեց ընդհանուր հրամանատարութիւնն: Այս առթիւ Մա-

(*) Տես «Մասիս»ի փետր. 14ի թիւը:

դաժնովի ուսերէն կենսագրութիւնը կը հաղորդէ հետեւեալները :

«Անպատ 15ի գիշերն երկու հայեր Պարսից բանակէն եկան գէտ ի ուսներն. այդ հայերէն մին կը ծառայէր Աբաս-Միրզայի քով իբր թարգման Ռուսաց լեզուին, եւ ժամանակաւ ծառայած էր Մաղաթովի տունն : Այդ հայերը շատ թախանձանօք ուզեցին տեսնել իշխան Մաղաթով, եւ հաղորդեցին իշխանին թէ՛ պարսիկները թողով իրենց բոլոր ծանրութիւններն թարթար գետի միւս կողմը, կը յառաջանային եւ յանկարծակի պիտի յարձակէին Ռուսաց բանակին վրայ : իշխանն անյապաղ այդ մասին տեղեկութիւններ տուաւ Պասկելիին եւ այս վերջինս ձեռք առաւ պէտք եղած միջոցները գիտագրելու համար :»

Արդարեւ Աբաս-Միրզան թողով իւր զինուորներու մի մասն Շուշի քով, ինքն 150,000 կանոնաւոր հետեւակով եւ 20,000 ձիաւորով կը յառաջանար դէպի Քանձակ ուրիշ 7 վերսդ հետեւ էր (գրեթէ մէկ ու կէս ժամուան ճանապարհ) : Աւանց Հայոց մատնութեանը Ռուսք ոչինչ պիտի գիտնային : Ռուսաց զինուորները խիստ սակաւաթիւ էին, այնպէս որ անհնարին էր պատերազմիլ : Պասկելի զորեց միայն պաշտպանողական դրբի մէջ գտնուիլ, զի թըշնամոյն վրայ յարձակին անկարելի կը թըւէր իրեն :

Ընդհակառակն իշխան Մաղաթով կը պնդէր թէ պէտք էր անմիջապէս պատերազմիլ : Նա լաւ կը ճանաչէր արեւելքի ներուճ բնաւորութիւնը, նա գիտէր որ թշնամոյն ժամանակ տալով նորա զօրութիւնն աւելի կը բարդուի, տեղացիք հետ զհետէ կը միանային զօրաւոր բանակին հետ, ասոնցմէ զատ հասկցուց որ ասիացիներու հետ պատերազմելու համար այնքան նշանակութիւն չունի զօրքերու թիւն որքան համարձակ եւ վճռական յարձակ մունքը :

Վճռեցին կուռիլ իշխան Մաղաթով այս տեղ եւս ցոյց տուաւ իւր զինուորական բարձր կարողութիւնը : Պատերազմը նպատաւոր եղաւ Ռուսաց պարսիկները չարաչար յաղթուեցան եւ անցան Նրատի գետը, իշխան Մաղաթով հալածեց զանոնք մինչեւ իրենց սահմանները :

Թշնամոյն հետանալով վերցուեցաւ բնականաբար Շուշի բերդի պաշարումն ալ Մաղաթով գնաց Շուշի ուր ցնծութեան ցոյցերով ընդունուեցաւ :

Այս յաղթութենէ վերջն ալ Ղարապաղ յուզման մէջ էր : Մէհտի խանը կը ժողովէր իւր կուսակիցները, կը գրգռէր տեղացիները եւ կը յորդորէր զանոնք, անցնիլ Նւրատի միւս կողմը, Պարսից հողին վրայ եւ այնտեղէն յարձակումներ գործել : իշխան Մաղաթով կ'ուզէր ինքզինքը ցոյց տալ իւր հայրենակիցներուն, բայց զինուոր չունէր : Որքան զինուոր կար յանձնուած էր Պասկելիին, բայց հայերն այս անգամ եւս օգնութեան հասան նմա :

Շուտով կազմուեցան կամաւորներու խումբեր զորս իշխանն իր հետ առնելով սկսաւ թռչիլ դէպի Ղարապաղի զանազան կողմերն եւ ամէն տեղ խաղաղեցուց Մէհտի խանի յարուցած խռովութիւններն :

Այս, Հայոց շնորհիւ Ղարապաղն հանդարտեցաւ եւ այլակրօն ցեղերն հնազանդեցան Ռուսաց, բայց յետոյ Գետոյ ուսը սկսան շօնել Մահմետականներն ու չարչարել հայերն : մոռցուեցաւ այս վերջիններու անհաւատարմութիւնը, մոռցուեցաւ

Հայոց անձնազոհութիւնը : Կը չոյէին, կը կը սիրէին, կը վարձատրէին ուսը իրենց թշնամիներն որպէս զի աւելի թշնամութիւն չընեն այնուհետեւ : Իսկ Հայոց հետ գէշ կը վարուէին, հոգ չէ, ադոնք մերիններն են» կ'ըսէին :

Գ.

Եթէ աչքի առաջ ունենանք այն կարեւորութիւնը զոր Պարսից կառավարութիւնը կ'ընծայէր Հայոց եւ համեմատենք ապագային մէջ Ռուսաց կողմանէ Հայոց դէմ ձեռք առնուած թշնամական միջոցները, պէտք է խորին կերպով ցաւինք որ հայերն այնքան համակրանք ցոյց տուին Ռուսաց եւ դաւեցին Պարսից դէմ որոց հետ կապուած էին իրենց ազգային շահերն :

Աբաս-Միրզան, Պարսից դահուճ թագաւորանքն, էր միանգամայն Պարսկաստանի մի նշանաւոր մասին, Ատրպատականի փոխարքայն : Ատրպատական գրեթէ քրիստոնէայէնէրու հայրենիքն էր : Հայերն, քրիստոնէայ Նեստորականներն անդ կը բնակէին շատ խիտ : Ատրպատականը սահմանակից էր պարսկական այն նահանգներուն զոր ուսները մասամբ գրաւած էին եւ կը փափաքէին գրաւել միւս մասն ալ : Այսպիսի պարագայի մը մէջ ակներեւ է թէ որքան մեծ էր Հայոց կարեւորութիւնը :

Աբաս-Միրզան քաջ պատերազմող մի չէր բայց խելացի քաղաքագէտ էր եւ լաւ կառավարիչ : Նա գիտէր օգուտ քաղել ամէն ուժերէ եւ համոզուած էր թէ Պարսկաստանի վերակենդանութեան անհրաժեշտ տարրեր կը կազմէին հայերն : Այս համոզմամբ Պարսից թագաւորանքն սկսաւ օր օրս օրէ բարձրացնել հայերն, գործունէութեան լայն ասպարէզ բանալ նոցա առաջ եւ շնորհել ընդարձակ արտօնութիւններ :

Աբաս-Միրզայի հայր Ծաթալի շահը նաեւ համակարծիք էր իւր որդւոյն եւ կարելի է ըսել որ նորա թագաւորութեան ժամանակ հայերը կատարելապէս բարեբաւտիկ էին Պարսկաստանի մէջ :

Ինչպէս երբեմն Շահ-Աբասը Պարսկաստանի վաճառականութիւնը ծաղկեցնելու համար կը կազմէր տաւառական ընկերութիւններ Սոլահանի հայրէն եւ ինքը կը գնէր նոցա դրամագլուխ, նոյնպէս ալ Աբաս-Միրզան ինքը զրամագլուխ կը գնէր հայ վաճառականներու :

Որպէս զի այլակրօն կառավարիչները կարող չիին հարստահարել հայերը, Աբաս-Միրզան զօրացուց մէլիքներու իշխանութիւնը, նոցա շնորհեց ընդարձակ իրաւունքներ, սահմանեց նոցա ոսծիկներ եւ, եւ :

Աբաս-Միրզան լաւ գիտէր թէ ինչպէս հայերը սերտ կերպով կապուած են իրենց եկեղեցւոյ եւ եկեղեցականներու հետ, հետեւաբար զանոնք շահելու համար շատ ոյժ եւ քաջալերութիւն կուտար քրիստոնէութեան, եւ զապեց մոլեռանդ պարսիկներն : Այդքանը չէր բաւեր, ինքը, Շահի ապագայ ժառանգը, անձամբ կ'երթար Հայոց եկեղեցին, ներկայ կը գտնուէր Հայոց եկեղեցական հանգէսներու եւ այսպէս իւր օրինակով ցոյց կուտար թէ Հայոց կրօնական պաշտամունքներն ո՛րքան արժանի են ամենայն յարգանաց : Հայոց եկեղեցիներն արգիլուած էր զանգակ զարնել, բայց Աբաս-Միրզա այդ իրաւունքը տուաւ :

Նոյն ժամանակ Ատրպատականի առաջնորդ էր Խարայէլ Եպիսկոպոս : Այդ Եպիս-

կոպոսն Աբաս-Միրզայի ամենալաւ բարեկամն էր եւ իշխանն յատկացուց նմա մեծագումար ոսծիկ : Զբաւականացաւ այդքանով, այլ ուզելով ապահովել առաջնորդարանի ծախքերն ընծայեց առաջնորդարանին ընդարձակ կալուածներ որոց եկամուտովն հանգիստ կերպով առաջնորդարանն կը հոգար իւր ծախքեր : Անցողաբար ըսենք որ այդ ժամանակ Ատրպատականի Հայոց հոգեւոր կառավարութեան առաջնորդարանը կը գտնուէր Մալմատ գաւառի Հոթիճի մէջ, եւ շնորհուած կալուածներն այդ գիւղի մէջն էին : վերջէն թեմական առաջնորդներն իրենց ագահութենէն դուրսալ վաճառեցին այդ կալուածներն :

Աբաս-Միրզան ապահովեցնելով առաջնորդարանին վիճակն ուզեց նաեւ ապահովել Հայոց վանքերու վիճակն : Այդ վանքերէն իւրաքանչիւրին շնորհեց մէկմէկ գիւղ, իրենց բնակիչներով, հողերով եւ սահմաններով : Այդ գիւղերն ազատեցան արքունի հարկեր տալու պարտականութենէն : Շնորհիւ այդ կարգադրութեան Հայոց վանքերը պիտի ստանային ո՛չ միայն մշակութեան բերքերու մի մասն, այլ եւ արքունի հարկերն ալ վճարեալ Պարսից տէրութեան իրենք պիտի տանէին : — Աբաս-Միրզայի շնորհած այդ կալուածները մինչեւ ցայժմ վանքերու անփոխականութիւնն են : Բայց ի՞նչ ողորմելի վիճակի մէջ կը գտնուին, շնորհիւ հոգեւոր կառավարութեան :

Աբաս-Միրզայի ամբողջական քաղաքն էր Դավիթ-Իշխանն ազատեց այդ քաղքի հայերն ամէն տեսակ հարկերէ որպէս զի նոցա կազմութիւնը բարեբաւ : Կ'ըսուի թէ մինչեւ ցայսօր Դավիթի հայերը կը վայելէն այդ արտօնութիւնը, մինչ իրենց դրացի մահմետականը հարկ կը վճարեն : Այսպէս Նոր-Ջուղայի Հայերը Պարսից կառավարութեան կը վճարեն տարեկան աւելի քան 800 թուման (ուելի քան 200 ոսկի) մինչեւ ցայժմ, իսկ կառավարութիւնն այս գումարէ կը վերագործնէ յետոյ Հայոց եկեղեցւոյն դպրոցին եւ վանքերուն :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄ

Ա. Գ. Կեդր. Վարչութեան Կրօնական Ժողովոյ

Ա. Եւէ Լրագրի 17 փետր. եւ 936 թիւ թերթին մէջ հրատարակուած է. « Ի պատասխան Ամեն. Ս. Պատրիարք Հօր մէկ գրոյն, Վեհ. Տ. Մակար Ս. Կաթողիկոսն յատուկ նամակաւ մը յայտնած է իւր գաղափարը՝ գերեզմաններ բանալու եւ ոսկերութի փոխադրելու փափակ խնդրոյն վրայ, որ ժամանակէ մ'իվեր կ'ըբաղեցնէ մեր ազգային ժողովները : Կ'ըսուի սակայն թէ եկեղեցական հարկ բաւական չեն համարիր զայս » :

Կրօնական Ժողովն Աղգային Կեդրոնական Վարչութեան ի պաշտօնէ կը յայտարարէ թէ մի այնպիսի գիր մինչեւ ցայսօր տեսած չէ :

(ԿՆԻՔ)

18 փետր. 1887

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԱՆ
ՏԵԼԳՐԱԳՐԱԿԱՆ ԱՐԵՒԵԼԵ ԻՐԱԳՐՈՒ